

18937

Ժայռ

5

391.99
Փ-31

Թիֆլիս
1907

891-99

Փ-31

43

Ղ. ՓԵՓԵՋԵԸՆ

Ժ Ա Յ Ռ

ԴՐԱՄԱ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ



Ա. անգամ խաղացած է Թիֆլիզի բեմի վրայ, 1905 թ. Ապրիլ 7-ին

— Թ Ի Յ Լ Ի Ս —

Էլեկտրոպեչատ ընկ. «Հ Ե Ր Մ Է Ս» ընկ. * Электротечат. Т-ва. „ГЕРМЕСЪ“
1907 (247)

Իրաւունքները վերադարձուած են: Ամեն անգամ, ներկայացնելու
համար, նախօրօք պիտի դիմել հետիւնակին միայն եւ քոյրսուրիւն
ստանալ:

1907. Երեւան.

Վ. Փափագեան

Настоящая пьеса, подъ заглавіемъ «Скала», соч. В. Паназя-
на, разрѣшена г. и. об. Главноначальствующаго для представле-
нія на сценахъ края. 18-го марта 1905 г. г. Тифлисъ.

Предсѣдатель комитета Гагкель
Секретарь Н. Меликъ-Нубаровъ



2927
41

2003

ԳՐԻԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՀԱԿ ԱՂԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ. Ժամանակով հա-
րուստ, այժմ աղքատացած կալածատէր: Ծեր և
նիհար: Հագնում է միշտ հնամաշ սիւրտուկ. տը-
խուր, մեղամազձոտ: 60 տարեկան . . . Սիրադեան
ՀՈՌՈՄՍԻՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ. Նրա կինը. պարզ
հագուստ. թիֆլիզեցու զվեսով. մաշկած կին, 50
տարեկան . . . Տիկ. Վարդուհի
ԱԼԷՔՍԱՆԴՐ. Նրանց որդին. նորաւարտ իրա-
ւաբան. պարզ հագուստ. 25—28 տարեկան. . . Զարմեան
ՄԱՐԳԱՐԻՏ. Նրա քոյրը. գիւղական պարզ աղ-
ջիկ. 20 տարեկան:
ՄԱՏՎԷՅ ԵԳՕՐԻՉ. Գիւղաքաղաքի հաշտարար
դատաւորը. գեր, առոյգ և զւարճախօս. 45 տար. Պետրոսեան
ԳՐԻԳՈՐ ԱՂԱ ՎԱՐԱԿԵԱՆ. Գիւղաքաղաքի ա-
մենահարուստ կալածատէր. վաշխառու: Հագնում
է արխալուղ սև մետաքսեայ և վրան պինջակ. կար-
տուկ. ոսկեայ գօտի. 55 տար. . . Յարութիւնեան
ՏԻԿԻՆ ՎԱՐԱԿԵԱՆ. Նրա կինը. շեապայով.
ցուրն հագուստ, վարդեր. կոտորտուղ կին. 40 տ.
ԹԷՐԷՉԱ. Նրանց աղջիկը, կրթւած Թիֆլիզ,
պանսիօնի մէջ. հագնում է պարզ, բայց թանգ հա-
գուստ. 20 տար. . . Տիկ. Մայսուրեան
ԱՐՇԱԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ. Գիւղաքաղաքի տանու-
տէրը. կրթւած երիտասարդ 30 տար.
ԲԱՂԴԱՍԱՐ ԱՄԻ. Գիւղացի, 60 տ., մտամուրդ,
խեղճ. մեծ փափախ, արխալուղ, չուխա. ձեռքին
զաւազան. . . Տէր-Դարեան
ԶԱՔԱՐ. 30 տ. գիւղացի. նոյն հագուստ, կար-
տուղով.
ԳԱԼՈՒՍՏ. 25 տ. գիւղացի. նոյն հագուստ.

ՄԱՐԳԱՐ. 50 տար. գիւղացի. Բաղդասարի
հագուստը.

ՄԱՐԿՈՍ. 50 տ. գիւղացի. նոյն հագուստ.

ՍԵՐՈՎԲ. 25 տ. Զաքարի նման հագնւած. Աբէլեան

ՀԱՅՐԱՊԵՏ. 30 տ. նոյն հագուստ.

ՔԱԶԱԼ ՄԱՐՏԻՐՈՍ. Գիւղական արական. քա-
շալ. 30 տ. Աւետեան

ԿԻՐԱԿՈՍ. Մանուկեանների ծառան. գիւղացի.

ՍԵՐԳՕ. Վարակեանների ծառան. գիւղացի.

ՄԻ ԵՍԱՌԻԼ. Պաշտօնական հագուստով.

Մի քանի եսառւններ—անխօս:

Անցքը կատարում է մեր օրերում, Կովկասի զաւառական գիւղա-
քաղաքներից մէկում:

Բնմի աջ ու ձախը՝ հանդիսականների կողմից:

ԱՌԱՋԻՆ ԱՐԵՐԻՆԺ

Սահակ աղա Մանուկեանի տանը: Հնամաշ, ծանր կահաւորութիւն: Մեծ
սրահ, որի մէջտեղի աստիճանաւոր դուռը քաց է դէպի մի փոքրիկ
սլաւոնաւ: Տեսնում են ծառեր, հնուում՝ լեռներ: Զախ կողմից երկու
լուսամուտ: Աջ կողմից մի դուռ՝ դրսի մուտքն է. խորքի աջ անկիւնից
երկրորդ դուռը՝ տանում է ներքին սենեակները:

1) ՏԻԿԻՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ, յետոյ՝ ՍԱ- ՀԱԿ ԱՂԱ.

Տ. ՄԱՆ.—(Վարագոյրը բացելիս, տնա-
յին հագուստով կանգնած է սլաւոնաւի վրայ,
կրակել է դէպի ցած եւ խօսում է աղախնի
հետ) Հի՛նչ ա՛... (Լուռ) Բա ի՛նչի՞, չե՛մ
ասել քեզ, որ սահաթը հինգին պատ-
րաստ ըլի... (Լուռ) Հի՛նչ... Դէ քիչ
քեօմուրը շատ քցիր, էլի՛... Այ քոռա-
նա՛ս դու, հա՛... Դէ փչի, փչի... Հի՛նչ...
(Լուռ) Բա, աղչի, ես քեզ չափ երեկ...

ՍԱՀԱԿ.—(Ներսի դռնից դուրս է գալիս.
սիւրտուկի մի թեկը հագած է, միւսը հագ-
նում է) Էլի՛ սկսեցիր գոռգոռոցը... (Գը-
նում է դէպի նա):

Տ. ՄԱՆ.—(Չէ նկատում նրան. միշտ ա-
ղախնի հետ) Հի՛նչ... Դէ մի քիչ բարձր
խօսա, էլի՛... Շաքարը բի՛ն ա... Դու
ի՛նչ բանն ա դա...

ՍԱՀԱԿ.—(Աւելի մօտենում է) Ա՛ղչի...

Դի՛չ կամաց խօսե՛ս... Չե՛ս թողնելու որ
տղան քնի...

Տ. ՄԱՆ.—(Շարունակում է նոյնը) Հի՛նչ...
բօ... դժբա՛... Սո՛ւգիւն...

ՍԱՀԱԿ.—(Թեւն է բռնում) Բօ, աղչի...
բա քեզ հետ չեմ...

Տ. ՄԱՆ.—(Շտապ՝ դառնում է) Սո՛ւգիւն
ա գալիս:

ՍԱՀԱԿ.—Դէ ի՛նչ անենք որ գալիս
է... Ի՛նչ ես գոռգոռում:

Տ. ՄԱՆ.—Բա որ ես հագնւած չեմ...
էս ի՛նչ ա իմ հալը:

ՍԱՀԱԿ.—Լաւ դէ... Գնա հագնւիր...
Մէկ էլ որ ցած խօսաս ու թողնես Սա-
շային քնի—լաւ կանես:

Տ. ՄԱՆ.—(Գնալով) Լաւ, լաւ. էդ
խօսքերը դու սուղեկին ասա, որ առանց
գոռգոռալու չի խօսում. (Գնում է):

ՍԱՀԱԿ.—(Հազել է. վրան-դուխն է շրտ-
կում. սլաւոնաւից նայում է մէկ, յետոյ գնում
է դէպի մուտքի դուռը):

2) ՆՈՅՆ, ՄԱՏՎԷՅ ԵԳՕՐԻՉ, յԵՏՈՂՍԻԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ.

ՄԱՏ. ԵԳՕՐԻՉ.—(Ամուսնայ հաղուստ, կոկարդով գլխարկ: Ներս է մտնում ծանր եւ դռան միջոց) Դէհ, աչքներդ լոյս, Սահակ... Ուզեցի աւելի շուտ գալ, բայց ասացի՝ քնած կը լինի... (Չեղբ է տալիս) Ո՞նց է մեր Ալէքսանդրը... բա ռւր է... (Գլխարկը հանում է, քրտինքը սրբում) Է՛... տղէդ էլ եկաւ... Ի՛ւրիստ, հը՞... Հայ-գիտի-հա, ի՛ւրիստ... Խօ աւարտե՛լ է...

ՍԱՀԱԿ.—(Ժպտում) Համեցէք... Շնորհակալ եմ... Ի հարկէ աւարտել է. դեռ էլի՞ չաւարտէր...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Դիպրոմով, հը՞... Ա՛յ կուռեմ, հա... (Ղուրջ) Է՛հ, փառք Աստուծոյ... (Նստում է) Լաւ ժամանակին հասաւ. էլ նեղութիւն չես քաշիլ... բա ռւր է, մէկ գար տեսնէ՞նք էդ իւրիստին. ախր պաշտօնակից դարձանք հիւսիս...

ՍԱՀԱԿ.—Քնել է. յոգնած էր:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Ծիծաղով) Ո՛չ հաւատամ սուտ-Քրիստոսի... Էն է Թիֆլիզ մտած, օգնական գրեկիս՝ լաւ հանգըստացած կը լինի, էլի:

ՍԱՀԱԿ.—Ձէ, Մատվէյ Եգորիչ, Թիֆլիզ դեռ չի մտել. յետոյ է գնալու... Ասում է որ փափագում էր առաջ ծընողներին գրեկել, հայրենիքը տեսնել, նրա լեռները... Չորս տարի էր ախր, որ մեկ չէր տեսել...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Բայտ ասա՞ որ էլի ֆանտազիօր է մնացել, էլի... Տօ, «հայրենի լեռներ» որն է... Ձեռ լսել որ ասում են թէ՛ «Յիմարք հայրենիս խնդրին. իսկ իմաստունք՝ հանգիստ իւրեանց»... (Առն) Հոռոմսիմը բայտ ուր է. գար մէկ նրան էլ աչքալուսանք ա-

նէինք... խեղճը շատ ուրախացած կը լինի...

ՍԱՀԱԿ.—(Նստում է) Դէ ի հարկէ... Հագնւում է. կը գայ... Մարգարիտա Օսիփովնան չի՞ գալու:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Կը գայ, եղբայր, նա էլ կը գայ... Կանանց բանը չը գիտես... Մինչև հագնւեն, մինչև... Շատ ասաց որ սպասեմ իրեն—բայց չը համբերեցի. ուզում էի մէկ ձեր ուրախութիւնը տեսնեմ... Բայտ ասում ես սուտե՛լ է, էլի... Առաջ, ի հարկէ, պամօշնիկ կը գրելի մի քանի տարի. յետոյ, մէկ էլ տեսար, պօրտֆէյլը թեի թաղ, մի չաղ գործ պօրտֆէյլի մէջ, մեկ նմաններէ առաջ կը կանգնի ռ... Հարուրանոցները կը գան ու կը գան... (Ծիծաղ) Հը՞, դժուր չեմ ասում... Ի՞նչպէս է մտադիր —Թիֆլիզ, թէ՞ Բագու:

ՍԱՀԱԿ.—Չը գիտեմ... Ասում է որ ամառն հանգստանալ է ուզում. յետոյ... գիւղական գործերով է ուզում զբաղւած լինել. գիւղումը մնալ...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Զարմացած) Ի՞նչպէս... Խօ քամինք չը կան գլխումը... Տօ, գիւղումն էլ եղալի գործ կը լինի... Լաւ չես լսած լինի... Ա՛յ, թող մէկ զարթնի, տես ի՞նչ ես նրան հնարքը ցոյց տամ... Մենք փորձեւած ենք... Ըհը, էս ա Հոռոմսիմն էլ եկաւ... (Ելնում է դիմաւորելու):

ՏԻԿ. ՄԱՆ.—(Մտնում է հագնւած. ժպտում):

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Գնում է դէպի նա) Է՛հ, աչքդ լոյս, Հոռոմսիմ. հրէն Սաշան էլ եկաւ... Էլ քաքէֆին քէֆ չի հասնի... (Չեղբն է թռնում):

ՏԻԿ. ՄԱՆ.—Աչքդ լուսով մնայ... Հա, բայտ... էսքան տարի աչքս ջուր կտրեց սպասելով:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Հիմի լսօ ամեն ցաւ կը մոռանաս... Հանաք քան չիմանաս,

հա... Հարուրանոցները էնպէս գան, որ ինքդ էլ զարմանաս... Չը զարթնեց...

ՏԻԿ. ՄԱՆ.—Զարթնեց. հիմի կը գայ... (Ամուսնուն) Սամաւարը չը բերին... Ասում ես՝ մի գոռա. բա չը գոռամ... Մէկ սնաթ ա՛ ասել եմ քցիր...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Շնու է դեռ, ի՞նչ է եղել որ. սկի զանգերն էլ չեն խփել... Առաջի եկողն էլ լսօ ես եմ, հը՞...

ՏԻԿ. ՄԱՆ.—Շնորհակալ ենք... բա Մարգարիտն ինչի չեկաւ. չի՞ էլ գալու:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Ի՞նչպէս չէ. բա չե՞ս թողնի որ մէկ զարգարէի...

3) ՆՈՅՆՔ և ԿԻՐԱԿՈՍ (Ժառանգ)

ԿԻՐԱԿՈՍ.—(Ներս է բերում սամաւարը. դռն մօտ) Խանութ, ըստե՞ղ զնեմ, թէ՞ ներսը:

ՏԻԿ. ՄԱՆ.—Ը՛ր, հողեմ գլխներդ. լաւ ա՛ որ բերիր... Հստեղ դիւր. Մարգօին էլ ասա՛ թող գայ չայը շինի:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Նոր եկած եղբօր վերջովը պտտելիս կը լինի ա՛յ...

ՏԻԿ. ՄԱՆ.—Հա... Զահլէն տանում ա. կասես չաշանակ ըլի. խօսում ա, հա խօսում:

ՍԱՀԱԿ.—Թող խօսայ. խեղճը սկի մի շնորհքով ջահիլի երես տեսնում է որ...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Բա ինչի՞, մենք պառաւէլ ենք... (Ծիծաղ) Ապա, մէկ Սաշադ գայ՝ տեսներ քո եմ ջահիլ, թէ՞ նա: Ո՞վ գիտի, Մոսկովի օդը ո՞նց դեղնացրած ըլի նրան:

ՏԻԿ. ՄԱՆ.—(Յաւելով) Հա... բայց դէ առողջ ա երևում... Ասում ա թէ մեր գեղի օդն ու ջուրը կը չաղացնի իրան մէկ ամսւայ մէջ:

ԿԻՐԱԿՈՍ.—(Որ սեղանը լուսամուտի մօտ

էր քաշիլ եւ սամաւարն էր դնում) Գրիգոր աղան ա գալիս...

ՍԱՀԱԿ.—(Վեր է կենում) Ի՞նչ... (Զարմացած է):

ՏԻԿ. ՄԱՆ.—Բօ... Գրիգոր աղան...

ԿԻՐԱԿՈՍ.—(Միշտ նոյն տեղից) Խա-նութի ու բարիչնի հետ...

ՏԻԿ. ՄԱՆ.—(Վաղելով դէպի լուսամուտը) Դժուր... (Նստալին) Էլ ռւր ես կանգնել... Վաղի ստաքանները բեր... Ամա, կաց, ես կը գնամ... Արի ինձ հետ... (Շտապ՝ դուրս է գնում):

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Սահակին) Էս լաւ նըշան է, Սահակ, որ Գրիգոր աղան էլ է գալիս աչքալուսանքի. էն էլ կնոջն ու աղջկայ հետ... Կարծեմ շատ էլ մէկ չէր գալիս ձեր տուն:

ՍԱՀԱԿ.—Սկի չէր եկել այդպէս... ընտանիքով...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Տեսնում ես՝ ինչ է նըշանակում իւրիստ որդի ունենալ...

4) ՆՈՅՆՔ, ԱԼԷՔՍԱՆԴՐ, ՄԱՐԳԱՐԻՏ, յԵՏՈՂՍԻԿ ԳՐԻԳՈՐ ԱՂԱ, Տ. ՎԱՐԱԿԵԱՆ ԵՒ ԹԷՐԷԶԱ.

ԱԼԷՔՍԱՆ.—(Զարթ է ժպտում՝ մտնում է Մարգարիտի հետ. դռն մօտից) Մատվէյ Եգորիչին իմ մեծ բարեներս...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Գնում է դէպի նա) Բօ, էդ դժուր ես, ա՛յ տղայ... (Համբուրում են) Ա՛յ թէ մեծացել ես, հա... (Չեղբորը դնում է ուսերին) Իւրիստ, հը՞... Դիպրոմով, հարուրանոցներ... Ա՛յ սիւրում եմ, երբ մարդիկ գիտեն լաւ կարիէրա ընտրել... Դէհ, ապա մէկ արի այս կողմը... (Մարգարիտին) Բարե Մարգօ, ի՞նչ ես... Ամա էլ ի՞նչ խօսք... Տեսնում եմ, տեսնում՝ որ ուրախ ես... (Ալէքսանին) Ապա մէկ այս կողմն արի:

եղբայր, պատմիր մէկ Մոսկւայից, մեր alma mater-ից...

ՍԱՀԱԿ.—(Որ մուտքի դուռն էր բացել, խօսում է դէպի դուռը) Համեցէք, համեցէք, Գրիգոր աղա... Էս ռը խաչիցը... Համեցէք, տիկին...

ԳՐԻԳՈՐ.—(Գրտում, բայց լաւ լսելի) Դէ՛հ, առաջինը Սաշան եկել է, աչքալուսանքի գնանք... Աղջիկս էլ ուզեց...

ԱԼԷՔՍ.—(Քրոջը) Թէրէզան է, չէ... ՄԱՏ. ԵԳՕՐ.—Նո՛ւ, եղբայր, այժմ մի շիկ աղջիկ կը տեսնես որ... Էն քո տեսած Թէրէզան չէ. մէկ գեղեցիկ ունի է գարձել...

ՍԱՀԱԿ.—(Գէպի դուռս, ապա ներս գալով) Շնորհակալ ենք, համեցէք...

(Ներս են մտնում Գրիգոր աղան, կինը ցոլուն հագուստով, Թէրէզան պարզ, ծղօտէ զխարկ, ձեռնոցներ):

ՄԱՐԳԱՐԻՏ.—(Վազում է դէպի Թէրէզան. համընդունում են) Բարե... Այ Սաշան...

ԱԼԷՔՍ.—(Լուռ մտնում է եւ քարկում):

ԳՐԻԳՈՐ.—Բարե ձեզ... Այ դու բարի ես եկել, Ալէքսան քեզ... Մեր աչքի-գլխի վրան եկել... (Թոթում է ձեռքը):

ԱԼԷՔՍ.—(Ընդունում է քարկը, ապա մտնում է Թէրէզային):

Թէրէզա.—(Ալէքսանին, ժպտուն եւ համարակ) Բարե էք եկել... (Պարզում է ձեռքը) Ի՞նչ ձանաչեցիք...

ԱԼԷՔՍ.—Ինչպէ՛ս չէ, օրիորդ... Բայց մի բոլակ ապշել էի, թէ որքան փոխած եմ գտնում ձեզ... (Լուռ խօսակցում են):

ԳՐԻԳՈՐ.—(Սահակին) Աչքդ լուռ էլի, Սահակ քեզ... Էս է տղէդ էլ եկաւ աւարտած, զիպլումսով... Բաս Հոռոմսին ուր է:

ՍԱՀԱԿ.—Կը գայ. դուք համեցէք նստէք:

Տ. ՎԱՐ.—(Լուռ ձեռքում է Սահակի

ձեռքը. լուռ աչքալուսանքներ ու բարեմաղ-թումիւններ՝ խոնարհում ինքներով):

ԳՐԻԳՈՐ.—(Մտնում է Մատիէ Եղօրիցին) Դուք արդէն այստեղ էք, Մատիէ Եղօրից... Այսօր երկրորդ անգամն ենք պատահում միմեանց:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Ի՞նչ արած, եղբայր, մենք դեռ էլի շատ կը պատահենք... (Սոսակցում են միասին):

Թէրէզա.—(Ալէքսանին) Չորս տարի է... երեւի արդէն պառակտ եմ, չէ...

ՄԱՐԳՕ.—Դէ լա՛ւ, լա՛ւ. քեզնից սիրունն ու ջանիլը ո՞վ կայ մեր գիւղումը:

ԱԼԷՔՍ.—Քոյրս իրաւացի է... Գեղեցկացել էք շատ:

Թէրէզա.—(Ժպտուն) Շնորհակալ եմ կոպիւմէնտի համար... Բայց երեւի մոռացել էք, որ 5—6 տարի առաջ ինձ ազիկ էլ էք կոչել, անձոնն էլ...

ԱԼԷՔՍ.—(Քողորմ) Եթէ արեւ եմ—յանցաւոր եմ... (Շարունակում են լուռ խօսակցել):

ՍԱՀԱԿ.—(Տիկին Վարակեանին)... Ինչպէ՛ս չէ, ի հարկէ կը սկսի... (Շարունակում են լուռ խօսակցում ինքներով):

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Գրիգորին) Նո՛ւ եղբայր... Դա արդէն օրէնքի գործ է... Եթէ թուղթ ունիս... Կանոնաւոր մուրհակ... (Շարունակում են լուռ խօսակցում ինքներով):

ՏԻԿ. ՎԱՐԱԿ.—(Սահակին) Բա Հոռոմսին ինչու չի երևում... Չը լինի՞ ներսում պատրաստութիւն է տեսնում... Ի՞նչ նա էլ... Մենք խօսեցինք եկել ուտել-խմելու...

ՍԱՀԱԿ.—Այդ ինչ խօսք է... Այս բոլակիս ասեմ գայ... (Գնում է դէպի դուռը):

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Իմում է Սահակին) Գիտե՛ս ինչ, Սահակ... Էն լաւ տանձերիցը... մի-մի բիւմկա արադ... Ընչեց մէկ...

ՍԱՀԱԿ.—Իսկոյն, անպատճառ... Մի քանի հատ էլ խիար...

ԳՐԻԳՈՐ.—Մատիէ Եղօրիցի ճաշակը խօսքի տէր:

ՍԱՀԱԿ.—(Ժպտալով) Նշան է անում եւ դուրս գնում):

ԱԼԷՔՍ.—(Որ Թէրէզայի, քրոջ ու տիկ. Վարակեանի հետ մտնելի են պատշգամբի քայ դուռը) Այնքան կարօտել էի մեր հայրենի լեռները, դաշտերն ու ջրերը... (Յոյց է տալիս) Նայեցէք մէկ... Ի՞նչ կայ աւելի շքեղ ու գեղեցիկ, քան մեր այս անտառը, այդ լեռն ու ապառաժները, այդ կարկաշտն զետրու...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Նստած տեղիցը ծաղրով) Էլի՛ր ինչ... երևում է, որ Մոսկւայի շրջակայքը գնալու միջոց չես ունեցել... Տօ, ես Պետրովսկի-Բազումովսկի լիճը հէնց սող հայրենիքիդ հետ չեմ փոխիլ...

ԱԼԷՔՍ.—(Նրան) Դուք սխալում էք, Մատիէ Եղօրից... Ի՞նչ կայ այնտեղ, որ համեմատի մեր երկրի այս բարձր ու շքեղ լեռներին, այս գլաւթ, արեւ տակ փայլ-փլող վազուն ջրերին, այդ կանաչ-ժպտուն մարգագետիններին... Այ, նայեցէք, օրիորդ. Նայեցէք հեռի այդ սիրուն արտերին, հանդերձների այդ խումբին...

Թէրէզա.—Դուք բանաստեղծ էք եղել, Ալէքսանդր Սահակիչ... երեւի գրում էք մինչեւ իսկ...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Նո՛ւ... Պրիսեմսին—եւ բանաստեղծ... Լաւ, Սաշան, թէ Աստուած կը սիրես... Զգեցրել են մեզ այդ քո դաշտերը, լեռները, մշակներն ու հանդեր...

ԱԼԷՔՍ.—Երբէք... Երբէք ես չեմ զգիլ... Ուրախութեամբ կերթամ այդ լեռներն ի վեր մագլցելու. այդ արօտի, այդ նախիրների մօտ. և յե-

տոյ՝ տեսնելու մեր թշուառ ու ճնշւած գիւղացիները աշխատանքը...

ԳՐԻԳՈՐ.—Հը՛մ... Լաւ թշուառներ ես գտել: Մէկ հուփ տան քեզ, որ իմանա թէ ճնշողն ո՞վ է:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Ասենք Սաշան ճիշտ է ասում—իւղճ են մեր գիւղացիք. բայց էլի... Այս գիւղաքաղաքը ամենից հարուստն է. բաղ, գինի... և յետոյ, գաւառի կեղծոյն, միբա՞վոյ սուղիւ...

ԱԼԷՔՍ.—(Թէրէզային) Չեղ միթէ չեն զբաւում այս երկրի շքեղ անկիւններն ու այդ ծաղկաւէտ լեռները: Երեւի դուք էլ զգեւ էք արդէն:

Թէրէզա.—Դէ ի հարկէ: Թէն մենք ձըմեռը, մեծ մասամբ Թիֆլիզ ենք մնում, բայց երբ գալիս ենք գիւղ, միշտ միենայն տեսարանները, միենայն դէմքերն ու մարդիկ... Եւ յետոյ, եթէ գիտենաք թէ որքան կոպիտ, կեղտոտ են մեր գիւղացիք:

ԱԼԷՔՍ.—Դուք մոռանում էք, օրիորդ, որ նոքա ամբողջ օրը գործում են. իրենց հանգամանքները չեն ներում մեզ պէս հազնել, լաւ ապրել:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Նո՛ւ, ֆանտազիօր կասեմ... Տօ մէկ-շա ինքդ էլ քննիր և տես թէ այդպէ՛ս է: Հազարների տէր գիտեմ, որ էլի ախոռի պէս տան մէջ է ապրում, կեղտոտ հագնւում...

5) ՆՈՅՆՔ, Տ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՍԱՀԱԿ ԵՒ ԿԻՐԱԿՈՍ (Մաքմ Երես եւ մեկու մանակը—օղի, վարունց եւ սանձ ձեռքին, սիկ. Մանուկեանը—մուրաբաներ, Կիրակոսը—մասու-ցարան բաժակներով եւ այլն):

ԳՐԻԳՈՐ.—(Ենում է եւ զիմաւորում տանտիկնոջ) Այ բարի տեսանք, տիկին,

աչքներդ լոյս, որդիդ էլ եկաւ վերջապէս...

Տ. ՄԱՆ.—(Շփոթած, մուրաքաները դրնում է սեղանի վրայ, ծնոր է տալիս, համբուրում են տ. Վարակիանի եւ Թէրէզայի հետ) Շնորհակալ եմ... Բարով ձեզ էլ աչքալուսանք անենք... (Թէրէզային) Դու էլ մի լաւ բաղդի արժանանաս... (Բորրին) Համեցէք, համեցէք. թէյը այս րոպէին... (Վարդօին) Աղչի, հլա չայը չեմ շինել... (Մառային) Գնա սուխարին էլ բեր... (Հիւրերին) Համեցէք նստէք... (Տղամարդկանց) մի-մի արաղ... (Ամուսնուն) Բաս հաց ու պանիրն ուր ա... (Վաղում է դէպի դուռը) Կիրակոս, հաց ու պանիրն էլ բեր հետդ...

ՄԱՍ. ԵԳՕՐ.—Այ լաւ տանտիկին... Սկի 10 րոպէ չը քաշեց—համ մուրաբա, համ խիար, արանդ... (Տիկին Մանուկեանին) Տղիդ տեսնելուցը թեւեր ես առեւ—թոնում ես, հա, Հոռոմսիմ:

ՏԻԿ. ՄԱՆ.—Դէ բա լինէ անեմ, ւս ձեզ մատաղ... Մէկ մինուճար տղայ ունեմ, նրա գալուսն էլ չուրախանամ... բա ռւր ա ձեր տիկինը, Մատիէյ...

ՄԱՍ. ԵԳՕՐ.—Դէ ես լինէ անեմ... Հալբաթ ուր որ է՝ կը գայ...

ԿԻՐԱԿՈՍ.—(Վերադառնում է, բերելով միւս բաները):

ՄԱՀԱԿ.—(Աջնում է օղի, կինը թէյ է պատրաստում. Գրիգորը ժպտը դեմքին՝ դիտում է Ալէքսանին եւ Թէրէզային, որոնք Մարգարիտի ընկերակցութեամբ խօսում են եւ ծիծաղում):

ՄԱՍ. ԵԳՕՐ.—(Վերցնում է օղու բաժակը եւ հեռուից՝ Ալէքսանին) Թէ Աստուածդ կը սիրես, Սաշա, շատ ժամանակ ունես դեռ՝ ջահիլ աղջիկների հետ սիւրի-բիւրի անելու. առաջ մէկ պառաւներին պատուիր, մէկ նրանց հետ խօսիր... Թէրէզան չի փախչիլ, մի վախենայ...

Երկուսդ էլ կրթւած մարդիկ էք, քի հարկէ, շատ կը հանդիպէք դեռ, կը խօսէք... Հալբաթ, Թէրէզան գիւղի մէջ ռւմ պիտի գտնի, որ հետը զրուցի. դու էլ գիւղի խնքոտ աղջիկների հետ խօզլուի չեմ դնի... Բայց առաջ մէկ դէմն արի... Այ, էս բիւմկան վերցրու... (Տալիս է) Մոսկւա սովորած կը լինես կոնծելը... Ապա, քեզ հետ մէկ խմենք, շնորհակտինք... Կօլէզ կը արալ... Ես քո ճանկը կընկնեմ, դու՝ իմը... մի-մեանց լաւ կը զգգեանք...

ԱԼԷՔ.—(Ղուռ ու ժպտուն՝ վերցնում է բաժակը):

ՄԱՍ. ԵԳՕՐ.—Այ, ըսէնց... Դէհ, շնորհակտ լինի... Բարով լաւ գործ ունենաս, չաղ պրակտիկա. սուգիաների դէմ լաւ խօսաս, հարուրանոցներով ջիւղ տողացնես, հօրդ ու մօրդ երախտիքը հատուցանես, նրանց էլ, այո ծերութեան օրերում, միջոց տաս հանգիստ ապրելու... Մի լաւ, հարուստ, հազարներով աղջիկ էլ ձանկես՝ ու... *моё почтение* ¹⁾...

ԱԼԷՔ.—Շնորհակալ եմ... Բայց երեւի ձեր ասածներից միայն մէկը կը լինի. —այն է՝ ծնողացս հանգիստ ապրելու մասին հոգալ: Իսկ չաղ պրակտիկա, հարիւրանոցներ, հազարներով աղջիկ... Ո՛չ, չեմ կարծում որ ընդունակ լինեմ այդ աստիճան փշանալու...

ՄԱՍ. ԵԳՕՐ.—(Որ ուզում էր խմել, իջեցնում է բաժակը եւ զարմացել է) Ո՞նց... Փշանալու... Բա էլ ռւր ես պրիսեաժ-նի ²⁾ դարձել, իրաւաբանութիւն սովորել, օրէնքների գրքերի վրայ մաշել... Փաստաբանը որ կայ՝ երեք երազ է ունենում...—չաղ պրակտիկա, հազարներով օժիտ ունեցող աղջիկ եւ չքեղ

¹⁾ Ռուսերէն ոճ.—«Յարգանքներս»: ²⁾ Փաստաբան. երկուսը հաւատարմատար:

նիստ ու կաց... Համ էլ, ուղես-չուղես, պիտի լինի այդ... Քեզ պէս խօսողներ շատ ենք տեսել... Որ հարուրանոցները գան—հազարների կը ձգտես. հազարները գան...

ԱԼԷՔ.—Խելօք բաներ չէք խօսում, Մատիէյ Եգօրիչ: Ինչո՞ւ փաստաբանը պիտի ստեղծւած լինի դրա համար: Նա, ընդհակառակն, եղել է, որ պաշտպանի անմեղների, թիկունք դառնայ հարուստահարւածներին...

ՄԱՍ. ԵԳՕՐ.—Տաւ-տաւ-տաւ... Լսել ենք, լսել... Քո կենացը. հլա մէկ խը-միր... (Խմում է. միւսներն էլ):

ԱԼԷՔ.—Գուցէ եւ լսել էք, յուսախափել... Բայց եթէ մի սուգիա ¹⁾ անպիտան է կամ կաշառակեր—դա չէ նշանակում որ բոլոր սուգիաներն էլ անպատճառ պիտի կաշառակեր լինեն ու անպիտան...

ԳՐԻԳՈՐ.—Այ թէ բռնեցիր... (Մի-ծաղում է) Հիմի եկէք թամաշա անենք թէ երկու իւրիստները ո՞նց են իրար ետիցը քաշ տալիս... (Սահակին) Ձէ, Սաշան զօքա է եղել...

ՄԱՍ. ԵԳՕՐ.—(Տարանում է) *Постой, постой* ²⁾... Մէք էլ ենք փաստաբանութիւն արել, ճառ խօսել... (Ալէքսանին) Ձէ, մէկ դու էն ասա, Սաշա. բաս որ չաղ պրակտիկան գայ—կը մերժես... Որ հազարներով աղջիկ սիրես—չեմ ամուսնանալ, կամ փողը չեմ վերցնիլ... Հը... (Յաղթական) ասա, է... Ե՞տ կը տաս, կասես՝ չեմ ուզում...

ԱԼԷՔ.—(Հանդարտ) Ես անիրաւութեան կողմը չեմ լինիլ, զրկողին չեմ պաշտպանիլ—թէկուզ հազարներ տան: Եւ աղջիկն էլ չեմ առնիլ, որովհետեւ նա հարուստ օժիտ ունի...

¹⁾ Դատաւոր: ²⁾ Ռուսերէն բառեր են. նշանակում է—«Կաց, կաց»:

ԹԵՐԷԶԱ.—Բրաւ... Մատիէյ Եգօրիչը յաղթում է:

ԳՐԻԳՈՐ.—Այդպէս, հա... Ապա, Սաշա, մէկ լաւ դրանք...

ՄԱՍ. ԵԳՕՐ.—*Постой* ասում եմ է է... Սահակ, էդ բիւմկաները մէկ լցրու, քողազս չորացաւ... (Կարմրած՝ Ալէքսանին) Ո՞նց թէ հազարներ տան՝ անիրաւի կողմը չեմ բռնիլ... Տօ, որ ասենք՝ մի մարդասպան գայ քեզ մօտ, որ դու էլ հաստատ գիտենաս թէ նա անիրաւ է... Մի քանի հազար խօստանայ որ իրեն արդարացնես, պաշտպանես դատարանում—չեմ անիլ, կը մերժեմ... էլ ինչացո՞ւ պրիսեաժնի ես, հը... Կը մերժեմ...

ԱԼԷՔ.—Կը մերժեմ:
ՄԱՍ. ԵԳՕՐ.—Բժւյ... Բա դու քո թշնամին եմ... Ե՞րբ է տեսնւած, որ փաստաբանը փող շահի իրաւացի կողմից. լաւ վարձատրութիւն տալիս են միշտ անիրաւները:

ԱԼԷՔ.—Մաստիկ սխալում էք... Անիրաւների ձեռքով մեղադրւածներն աւելի շատ են, քան անիրաւները, աւազակները... զրկւածներին պաշտպանելն էլ փող է բերում: Բայց—որը զըլ-խաւորն է—հոգեկան մեծ բաւականութիւն է զգում մարդ, երբ յաջողում է կորզել աւազակի, հարստահարողի ձեռքից մի անմեղ զօհ, մի ազնիւ աշխատաւոր... Այ, երբ ինձ գործի մէջ տեսնէք հէնց այստեղ, գուցէ եւ ձեր դատարանում...

ՄԱՍ. ԵԳՕՐ.—(Վախեցած) Ի՞նչ... չը լինի՞ մեր գիւղումն ես ուզում փորձել դալլաքութիւնը...

ԱԼԷՔ.—Այո. ես վճռել եմ այստեղ իսկ մնալ եւ գործել... Այսպիսի խուլ անկիւններում աւելի շատ են անիրաւութիւններ, ու հարստահարութիւններ, որոնց դէմ կուել է պէտք... Եւ

ես, որ սովորել եմ ու գինեւել այդպիսի կուրի համար—պարտականութիւն եմ գտնում նախ և առաջ ծառայել իմ հայրենիքին, իմ թշուառ եղբայրներին...

ԳՐԻԳՈՐ.—(Անճոռոտ) Ահա թէ ինչ... Նոր բաներ ենք լսում...

ԹԷՐԷԶԱ.—(Ալեքսանին) Դուք կատակ չէք անում. ուզում էք գիւղը մնալ... Չմեռն էլ... և ոչ թէ Թիֆլիզ:

ԱԼԷՔ.—Կատակ չեմ անում: Թիֆլիզում շատ կան փաստաբաններ. իսկ գիւղերում ոչ ոք չը կայ. և զանազան խարեբայ արւակառուներ, յաճախ միացած վաշխառուների հետ, քածում են գիւղացոց, քանդում նոցա, թշուառացնում... Վճռել եմ իմ գիտութիւնով օգնել հայրենակիցներին, հասկացնել օրէնքն ու նրանից օգտուելու միջոցները... Այդ եմ երազել ես, երբ ուսանում էի, այդպէս երազով էլ եկել եմ ու պիտի մնամ գիւղում գործելու:

ՏԻԿ. ՎԱՐ.—Ֆիհ... գիւղի փաստաբան... Մարդ երեք-չորս տարի Մոսկւա սովորի, գիպլոմ ունենայ ծոցը—և գիւղ...

ԳՐԻԳՈՐ.—(Հեղձորէն) Եւ դեռ ուզում է գիւղի պրակտիկայով ինքն էլ ապրել, ծնողներին էլ օգնել... Կը տեսնենք... (Ալեքսանին) Դեռ դու աղ բերելու ես գնում, որդի...

ԱԼԷՔ.—Ես դրամի, հարստութեան պէտք չունիմ. մի կտոր հաց ունինք մեր այգուց—և դա մեզ բաւական է... Այնպէս չէ, հայր, այնպէս չէ, մայր... (Գնում է դէպի Թեթեղան):

ՏԻԿ. ՄԱՆ.—Ասենք ի հարկէ, Աստուծոյ քաղցած չենք մնալ... բայց դե քաղաքումը փող կաշխատէիր, մեր...

ՍԱՀԱԿ.—(Արաղ՝ միջանցում է) Լաւ, լաւ... Թող, Սաշա, թող այդ բոլորը: Ի՞նչ ես շտապում... Քիչ հանգստացիր,

ամառս մնա, կաղուղւր... Դեռ օր շատ կայ:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Նո՛ւ, ի հարկէ, ի հարկէ, եղբայր: Սո այս վերջին անգամը չէ, որ տեսնում ենք: Էլի կը հանդիպենք, էլի կը խօսենք... Ինքզ էլ մէկ աչքովդ կը տեսնես, մեր գործերի և մարդկանց հետ կը ծանօթանաս... (Վերջում է տանտիկնոջ առաջարկած եէյը եւ նստում):

ԱԼԷՔ.—(Լուռ ժպտում է, յետոյ Թեթեղանի եւ Մարգոի հետ անցնում է դէպի լուսամուտը):

ԳՐԻԳՈՐ.—(Թէյ խմելով) Գիւղ, գիւղ... Որ չէն ասում... Ի՞նչ կայ գիւղումը... (Սահակին) Եւ ո՞վ է դրա գլխի մէջ լցրել, թէ գիւղում հարստահարում են, գիւղում օրէնքը հասկացող չը կայ... Բաս Մատվէյ Եգորիչը օրէնք չը գիտէ. բաս մենք, որ կեանքներս դատարաններում ենք անցկացրել... Հէնց ամէն մի գիւղացի... Օրէնք չը գիտեն... Ապա, թէ կարող ես, խմբիր մէկ մի գիւղացու...

ՍԱՀԱԿ.—Դէ ի հարկէ... (Քիչ կամայ) Ջահիլ է... Նոր է աւարտել...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Հա, ի հարկէ. դեռ քածինք կան... Գրքեր, լրագիրներ է կարդացել... Հայ-հարայ, գիւղերումը թաւանում են, հարստահարում, փաստաբան չը կայ, սուգիէն կաշտակեր է. չը գիտեմ—օրէնքը չէն գործադրում, վաշխառուներ կան... Թող մէկ զան հէնց մեր արխիւը քննեն. թէ մի հատ վէրսիլ գտնեն 40 տոկոսով գրած... Բաս ես օրէնք չը գիտեմ, թէյը կը տամ...

6) ՆՈՅՆՔ ԵՒ ԱՐՇԱԿ (Գիւղական ամուսնուր)

ԱՐՇԱԿ.—(Երևում է դռն մէջ) Բաբէ ձեզ...

ՍԱՀԱԿ. (Ենում է գնում դէպի նա) Այ համեցէք, տանուտէր... աչքներին գլխներին վրայ:

ԱՐՇԱԿ.—(Սեղմում է նրա ձեռքը եւ լուռ շնորհակտում):

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Ուռա, տանուտէրն էլ եկաւ...

ԱՐՇԱԿ.—(Մտնող Ալեքսանին) Բարի էք եկել, պ. Ալեքսանդր:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Սաշա, մեր տանուտէրն է, հա. էդպէս ջահիլ... Դէ, էլ ի՞նչ արած. աշխարհս հիմի ջահիլներին է... Ուսում առած է համ... Ներսիսեանումն է սովորել. մի քիչ էլ փիլիսոփայ է... (Ծիծաղ):

ԱԼԷՔՍ.—Իրաւ, այժմ դժուար էք մեր տանուտէրը: Շատ ուրախ եմ: Մենք անցեալում քիչ ենք հանդիպել, բայց, այսուհետեւ, յոյս ունիմ որ յաճախ տեսնենք:

ԱՐՇԱԿ.—Ուրախ կը լինեմ: (Գտնում է մօտեցող տանտիկնոջ եւ ձեռքը սեղմելով լուռ շնորհակտում):

ՏԻԿ. ՄԱՆ.—(Փոխադարձ լուռ շնորհակտութիւններ):

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Օղու քաժակներով մօտենում է): Ապա, տանուտէր, առ մէկ այս. շնորհակտիր, աչքալուսանք արա...

ԱՐՇԱԿ.—(Ժպտուն) Շնորհակալ եմ. հացս նոր կերայ:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Ոչինչ սա կը մարսեցնի:

ԱՐՇԱԿ.—Ձէ, շնորհակալ եմ... (Ալեքսանին) Երևի երկար չէք մնալ մեզ մօտ:

ԱԼԷՔՍ.—Ընդհակառակն, երկար կը մնամ:

ԱՐՇԱԿ.—Ամառն ի հարկէ. քաղաքում շատ շոգ է լինում. մեզ մօտ է:

ԱԼԷՔՍ.—Այո. բայց ես ձմեռն էլ

կը մնամ: Դեռ շատ կը ձանձրացնեմ բոլորիդ, մանաւանդ ձեզ:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Լսում ես, տանուտէր. Սաշան ուզում է մեր գիւղումն սկսել իր պրակտիկան... Ասում է՝ գիւղում թաւանում են, պէտք է օրէնք հասկացնող... Էլ բան ու գործ չունենք, էլի...

ԱՐՇԱԿ.—(Չարմայած եւ ձեռքերը լուռ) Իրաւ... Մեր գիւղումն էք ուզում գործել... (Ուրախ) Հիմաւի բան կը լինի: Որ գիտենաք թէ որքան պէտք ունենք մի փաստաբանի, որ հասկանար, օգնէր տանջողներին... (Խօսելով գնում է դէպի պաշտպանը):

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Գրիգորին) Պրծանք... Գտաւ իրեն պէս ֆանտազիօրը... Հմի երազներ կը տեսնեն, պլաններ կը սարքեն—որ էլ ասել չի լինի...

ԳՐԻԳՈՐ.—(Մոռլ) Յիմարութիւն... Մի ամիս չի քաշիլ—կը փախչի գիւղից: Ախր գիւղն ինչ, փաստաբանն ինչ... (Կռնում է դէպի նա եւ աւելի ցած): Մէկ էլ, գիտէք, որ բան է, էդ գիւղացիները գործեր տան դրան—էլ դժուար կը լինի ձեզ շուտ-շուտ վճռել ու կարճ կապել: Ինքան կը խօսի, կը ձգձգի, էնքան օրէնքներ յօդաւանդեն...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—(Անճոռոտ) Ձէ, տեսնում եմ որ գլխիս խաթաբալա է լինելու սա... Հազր մեզ-մեզ գործերը վերջացնում էինք...

ԳՐԻԳՈՐ.—Ի հարկէ... (Աւելի է կռնում եւ փախցնով խօսում):

ԹԷՐԷԶԱ.—(Մարգոին) Լաւ, գնանք տեսնենք... Սաշային էլ ասենք... (Հեռից Ալեքսանին) Ալեքսանդր Սահակիչ...

ԱԼԷՔՍ.—(Պատշգամից քիչ ներս գալով) Ինչ հետ էք, օրիորդ:

ԹԷՐԷԶԱ.—Ուզում ենք պարտէզ իջ-

ներ... Գնանք. մեզ հետ պ. տանու-
տէրն էլ թող գայ. այնտեղ կըխօսակ-
ցենք:

Ալէքս.—Ինչո՞ւ չէ... (Արշակին) Կը
գա՞նք մեզ հետ, պ. Արշակ:

ԱՐՇԱԿ.—Ուրախութեամբ. միայն
մի քանի րոպէով. յետոյ ես այնտեղից
կը գնամ. քիչ գործեր ունիմ:

Ալէքս.—(Նրա հետ ներս է գալիս)
Գնանք ուրեմն... Մինչև իսկ մեր
խօսակցութիւնը կարող ենք թողնել
ուրիշ օրւան: Ես կը գամ ձեզ մօտ
գուցէ վաղն իսկ: Դեռ շատ տեղի-
կութիւններ կուզէի ունենալ:

ԱՐՇԱԿ.—(Խօնարկելով) Որքան ուզէք՝
պատրաստ եմ. միայն թէ գուր մեզ
մօտ մնացէք...

Ալէքս.—Անշուշտ... (Թէրէզային) Գը-
նանք, օրիորդ:

Թէրէզա.—(Հօրը) Հայրիկ, մենք պար-
տէզ ենք իջնում... Եթէ դուք ուզում
էք գնալ՝ ինձ մի սպասէք, ես յետոյ
կը գամ...

(Ալէքսան, Թէրէզա, Մարգո եւ Արշակ
զննում են):

ԳՐԻԳՈՐ.—Հա՞մ... Գնացէք... (Մնա-
ցողներին) Թող գնան, ջահիլ են, թող
քիչ շանա խփեն...

(Գրիգոր լսում են հետադարձ եկեղեցու զան-
գակների ձայներ):

Տ. ՄԱՆՈՒԿ.—Ըհ, դանդաղ խփե-
ցին... (Խաչակնքում են ամենքը):

Տ. ՎԱՐԱԿ.—(Ոտքի է ելնում) Չը գը-
նանք, Գրիգոր. Թէրէզան երեւի չեւ
շատ կը մնայ այստեղ:

ԳՐԻԳՈՐ.—(Ելնում է) Հա՞մ... Լաւ,
գնանք: (Սահակին) Դէհ, մեզ մօտ կը
գաք դուք էլ, ի հարկէ: Բարեկամու-
թիւն անենք: Սաշային ես շատ սիրե-
ցի. Դէ ի հարկէ, էն որ ասում է
թէ գիւղումը կը մնայ—շատ էլ հաւա-
տալու բան չի. դուք մի տխրէք.

գրքեր կարդացած կը լինի, բաներ
լսած... Նրանց քամին է: Էդ նոր ա-
ւարտածները բոլորը սկզբում բռն-
բռնացնում են այդպէս... Թող մի քիչ
դեռ մնայ, զգուշ ամեն բանից... (Տա-
նում է Սահակին մի կողմ եւ տաք-տաք
խօսում հետը):

Տ. ՄԱՆՈՒԿ.—(Տ. Վարակեանին) Ին-
չո՞ւ էք շտապում, մնացէք, երեկոյեան
մի լաւ քէֆ կանենք... (Մտովէյ Եղօ-
րիչին) Տիկինդ էլ խօսէ՞լաւ...

ՄԱՏՎ. ԵԳՕՐ.—Հա՞մ... Տեսնես էլի
ի՞նչ է պատահել... (Ելնում է) Մէկ
գնամ տեսնեմ ինչո՞ւ չեկաւ:

Տ. ՄԱՆՈՒԿ.—Վա՛յ չէ, չէ. նստիր,
հըր ես գնում... Ծառային կը ղըր-
կենք:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Չէ, ես կերթամ...
Համ էլ մի քիչ ման գամ, շոգ է այս-
տեղ... Յետոյ էլի կը գամ. միտսին
կը գանք... (Վերցնում է զլիսարկը) Թող
Սաշան էլ մի քիչ մասլահաթ անի
Թէրէզի հետ... Ձահիլ են... (Գրիգորին
նշանակալից ակնարկով) Որ ճրագով փըն-
տուէր է, այսպէս փեսացու...

ԳՐԻԳՈՐ.—(Ծիծաղով եւ իրրեւ թէ
նեղացած) Ի՞նչ էք հրամայում... Թող-
նենք այդ խօսքերը...

Տ. ՎԱՐԱԿ.—Իհ, Մատվէյ Եգօրիչ,
գիւղի արեւակաւ...

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Գիւղի արեւակաւ
որն է... Մարդը պրիսեւաժնի է, հաս-
կանում ես: Հազար արեւակաւի մի
ձեռքով հուպ կը տայ, ջէբը կը գնի...
(Սահակին) Դէհ, ցտեսութիւն. կը
գանք... Բաս մէկ լաւ քէֆ ենք ա-
նում այս երեկոյ, հա՞մ, Հոռոմսիմ:

Տ. ՄԱՆՈՒԿ.—Անպատճառ: Ասել եմ
որ մի չաղ գառը մորթեն:

ՄԱՏ. ԵԳՕՐ.—Ա՛յ շատ ապրիս...
Մէկ քէֆ անենք, որ սող գեղը հա-
ւաքի գլխներին... (Գնում է ծիծաղելով):

7) ՄՆԱՅԱԾՆԵՐԸ, ՎԵՐՋՈՒՄ ԿԻ-
ՐԱԿՈՍ. (Քիչ լուռ է բեմի վրայ.
Գրիգորն ու կինը կանգնած: Տի-
կին Մանուկեանը սեղանն է
ժողովում, Սահակը՝ օղին):

ԳՐԻԳՈՐ.—Է՛դպէս... Տղադ էլ ե-
կաւ... Հիմի էլ խօսէ՞ս գանգաւի,
որ դժուարութեան մէջ ես, Սահակ քէֆ:
Աստուծով լաւ փող կաշխատի, պարտ-
քըդ էլ կը տաս... (Վօտեցող Սահակին
քիչ մի կողմ է տանում) Բայց գիտե՞ս,
աշխատիր գլխիցն հանել գիւղում
մնալու յիմար միտքը... Ախր գիւղը
ի՞նչ եկամուտ կը տայ նրան: Որ սող
տարին աշխատի, սկի մի քանի հա-
րիւր էլ չի ունենալ: Յետոյ, դրա-
նով պարտքիցդ կը պրծնե՞ս:

ՍԱՀԱԿ.—Ի հարկէ... Տեսնենք...
Խենթութիւն է ասածը...

ԳՐԻԳՈՐ.—(Չայնը աւելի է բարձրաց-
նում) Ի հարկէ՝ խենթութիւն է. Ի՞նչ
գործ պիտի ունենայ գիւղումը: Մէկը
հէնց ես. միթէ պէտք ունիմ փաստա-
բանի... Սկի էլ չէ: Ո՛ղջ կենայ Բ. Նալ
Մարտիրոսը. համ էժան, համ էլ օ-
րէնքը իմացող... Չէ, յիմարութիւն
թող չանի. Թող գնայ Թիֆլիզ. փող
չունի—տամ. մի լաւ կանտօր բաց ա-
նի... Ես խօսք եմ տալիս, որ մենակ
հէնց-ինքս տարեկան նրան 2—3 հա-
զարի գործ տամ... Այնքան կապեր ու-
նիմ. բոլորին էլ կը ծանօթացնեմ.
տղայիս պէս նայեմ... Հը՞, սրմն ինչ
կասես, Հոռոմսիմ:

ՏԻԿ. ՄԱՆ.—Ի հարկէ, քեզ մատաղ
Գրիգոր աղա... Դէհ, հըր նոր ա եկել,
ջահիլ ա... Ես գիտեմ, կերթայ Թիֆ-
լիզ: Քաղաքի սովորը՝ գեղից շուտ կը
զգուի: Թող հըր մէկ ամառս հանգըս-
տանայ:

ԳՐԻԳՈՐ.—Թող հանգստանայ, քէֆ
անի: Իմ տունս էլ առաջը բաց, իմ
բաղերն էլ... Շուտ-շուտ դրկէք մեզ
մօտ. Թէրէզան էլ հազար մի կըթւած
մարդու երես կը տեսնի...

ՍԱՀԱԿ.—(Աղաչաւոր) Մնացէք մեզ
մօտ... ընթերցինք...

ԳՐԻԳՈՐ.—Չէ, գործեր կան... Մար-
դիկ են գալու մօտս... Հա՞մ... (Ելի մի
կողմ է տանում Սահակին) Մուրհակիդ ժա-
մանակը մի-երկու ամիս է մնում, գի-
տե՞ս... Դէ լաւ, հոգս մի անիլ. ես քեզ
նեղութիւն տուող չեմ... Չես կարող—
ջանդ սող ըլի... Հըս կուզես՝ պատ-
ռեմ-քցեմ: Սաշային դուրբան անեմ նա
էլ... Մի քանի հազարը ի՞նչ բան է, որ
քէֆդ կոտրեմ... Ոչինչ, թող մնայ. երբ
կարողանաս, Սաշան աշխատի...

ՍԱՀԱԿ.—(Աւրախ, թոթովելով) Շնոր-
հակալ եմ... Թագացնենք բաս մուր-
հակը:

ԳՐԻԳՈՐ.—Չէ, ի՞նչ հարկաւոր է...
Քեզնից ուզողը չը կայ: Երբ Սաշան
աշխատի՝ կամաց-կամաց կը տաք:

ՍԱՀԱԿ.—Ո՛ղջ մնաս... Թեթեացրի
ինձ. թէ չէ՝ ի՞նչ պիտի անէի: Մի մի՞ծ
բեռից աղատեցիր ինձ...

ԳՐԻԳՈՐ.—Քէֆդ քեզ պահիր... Հա՞մ,
Սաշային էգուց մեր տուն բեր. դուք
էլ եկէք մեզ մօտ ճաշենք, մի քիչ խօ-
սենք... բարեկամանանք... (Վօտենում է
տիկիններին) Դէհ, գնանք, Մաթեւիկ...
(Չեղք է տալիս տանիկնոջ) Մնա՛ք բարե...
(Խրար ձեռք են թողնում. հայկական ձեւե-
րով բարեններ. ծանուպարն են դնում հիւրե-
րին. դուռն մփչի՝ բարեններ):

ՍԱՀԱԿ.—(Ներս է գալիս, ձեռքերն ու-
րախ՝ շփում է, յետոյ՝ դէպի սեղանը գնացող
կնոջ) Լսեցի՞ր, այ կնիկ... Սկի չէի հա-
ւատալ: Գիտե՞ս, մուրհակն ուզում էր
պատուի, պարտքս ոչնչացնի:

ՏԻԿ. ՄԱՆ.—(Ապշած) Բժւյ... Հրաշք
ես պատմում:

ՍԱՀԱԿ.—Բան... Ասում է՝ թող Սա-
շային դուրբան լինի... Ասում է՝ չեմ
ուզում, թող մնայ, երբ Սաշան աշխա-
տի... (Վորդրդաւոր) Չէ, ինչպէս տես-
նում եմ, Սաշան կպաւ աչքին:

ՏԻԿ. ՄԱՆ.—(Սեղանին է մօտենում եւ
սկսում հաւարել) Հա, ի՞նչ լաւ կը լինէր:
Թէ պարտքիցը կազատէինք, մեր տունն
ու բաղը կը պրծացնէինք, թէ փող էլ
կը տար վրան... (Գտնում է դեպի ներ-
քին դուռը եւ ծայնում) Կիրակոս... (ամուս-
նուն) Հը՞, ճիշտ չե՞մ ասում:

ԿԻՐԱԿՈՍ.—(Լքւն՝ մտնում է):

ՏԻԿ. ՄԱՆ.—(Նրան) Հաւաքիր... Գառը
մորթեցիր:

ԿԻՐԱԿՈՍ.—Հրամանք ես. քերթում
են:

ՏԻԿ. ՄԱՆ.—Լաւ, դնանք պատրաս-
տութիւն տեսնենք... Սամաւաբը վեր-
ցրու... (Ինքն էլ բաժակներն է վերցնում)
Յետոյ կը գաս մնացածներն էլ կը բե-
րես... (Գնալիս՝ ամուսնուն) Հը՞, քէֆդ
լաւացաւ, չէ՞... Ի՞նչ ուզում են՝ ասեն.
Գրիգոր աղան լաւ մարդ է. (Գոռն մի-
ջից) Սաշան էլ, ինչպէս տեսնում եմ,
Թէրէզի...

ՍԱՀԱԿ.—(Միջահատում է) Լաւ, լաւ,
չեքիք է: Ի՞նչ ես էլի ամենքին ա-
սում: Ձէնդ փորդ քաշի՝ տեսնենք
ի՞նչ կանենք:

(Տիկին Մանուկեանը գնում է):

ՍԱՀԱԿ.—(Ձեռքերը շփելով՝ սի քանի
քայլ է անում, յետոյ գնում դեպի պատշգամ:
Փողոցից լսում են հեռաւոր երգի եւ երաժշ-
տական գործիքի խուլ ծայներ: Սահակը մի
բան է յիշում, շտապով գնալ է ուզում, բայց
դրսից լսում են քրքիչների ծայներ: Կանգ է
առնում):

8) ՆՈՅՆ, ԹԵՐԷԶԱ, ԱԼԷՔՍԱՆԻՐ
և ՄԱՐԳՕ. (Յիծաղելով ու քիչ-
կերով ներս են խուժում):

ԱԼԷՔ.—(Կիտովին դեպի դուռը) Այդ չե-
ղաւ, օրիորդ. դուք խօսք տւիք ասե-
լու... (Ներս է գալիս):

ԹԵՐԷԶԱ.—(Ներս է մտնում կոկետու-
թեամբ) Ձեմ ասիլ... Դա իմ գաղտ-
նիքն է:

ՄԱՐԳՕ.—Թող չասի. ես կասեմ:
Քեզ համար էր, Սաշա, քեզ համար:

ԹԵՐԷԶԱ.—(Քողորով) Ձը հաւատաք,
սուտ է, դիտմամբ է ասում, որ ինձ
կարծրացնի... (Մարգարիտին, իբր թէ
բարկացած) Չա՛ր, չա՛ր... (Կարսրում է, յե-
տոյ յարձակում Մարգոի վրայ, բայց պինտ
գրկում է եւ համբուրում):

ՍԱՀԱԿ.—(Լրջացած) Վա, վա... Ի՞նչ
է եղել, ինչո՞ւ էք կռուում... (Նրբ տես-
նում է վերջը՝ ծիծաղելով) Հա, համբուր-
ւում էք... դա ուրիշ բան:

ՄԱՐԳՕ.—(Պոկ է գալիս Թէրէզայի զոր-
կից եւ հօրը) Գիտե՞ս, հայրիկ...

ԹԵՐԷԶԱ.—(Արդիւում է) Չասես,
Մարգո, չասես, ամօթ է:

ՄԱՐԳՕ.—Ինչո՞ւ է ամօթ, կասեմ:

ԹԵՐԷԶԱ.—Չասես, չասես...

ՄԱՐԳՕ.—(Վազում է հօր մօտ) Կա-

սեմ... Գիտե՞ս, հայրիկ. էն որ մի
խոտ կայ, երեք թերթ ունի... Թէրէ-
զան քաղեց... (Թէրէզային որ ուզում է
արգելիլ) Թող... Թէրէզ... Հա... քաղեց,
ամեն մի տերեւի մի-մի տղամարդի
անուն յիշեց մտքումը... Ի՛ հօրիկէ,
Սաշային էլ կար. յետոյ ասաց.—
«Սիրում է ինձ»... և քաղեց. խոտա-
ցել էր եղածը ասելու, բայց չասաց:

ՍԱՀԱԿ.—(Ժպտալով) Բաս որ չի ա-
սել, ուրեմն Սաշան կը լինի:

ԹԵՐԷԶԱ.—Ո՛չ, ո՛չ, նա չէ, նա չէ...
ուրիշն է:

ՍԱՀԱԿ.—(Շոյելով նրան) Դէ լաւ, ի՞նչ
կայ ամաչելու: Ինչի՞, որ Սաշան լի-
նի՝ չե՞ս ուզիլ... Ի՞նչ է, չե՞ս հաւա-
նում:

ԱԼԷՔՍ.—Հայրիկ, թող...

(Նրաժշտութեան ծայնը աւելի է մօտենում)

ՍԱՀԱԿ.—(Լրջանում է) Դէ, հանաք
եմ անում:

ԹԵՐԷԶԱ.—Ի՞նչ հանաքչին էք, Սա-
հակ Պետրովիչ... (Մօտենում է լուսամու-
տին) Սա ինչ մուգիկա է. (Նայում է)
Նայեցէք, Աղէքսանդր Սահակիչ, կոյր
աշուղներ են:

(Ամենքը մօտենում են լուսամուտներին:
Թէրէզան եւ Ալէքսանը մէկի առաջ, Սահակն
ու իր աղջիկը՝ միւսի):

ՍԱՀԱԿ.—Քոռ եղիկն է... Կուզես՝
ասեմ այս երեկոյ մեզ մօտ գայ, Սա-
շա. լաւ-լաւ երգեր գիտէ ասել:

ԱԼԷՔՍ.—Հայրէ՛ն:

ՍԱՀԱԿ.—Այո. նոր-նոր խաղեր. լաւ
էլ ձայն ունի. ամբողջ գիշեր կերգի,
հիւրերին կը զարձացնի:

ԱԼԷՔՍ.—(Գառնալով հօրը) Ի՞նչ է, հիւ-
րեր կը լինեն այս երեկոյ:

ՍԱՀԱԿ.—Մի ողջ գառն ենք մորթել.
Մատվէյը կը լինի, ուրիշներն էլ...

ԱԼԷՔՍ.—Իսկ Գրիգոր աղան ու տի-
կի՞նը:

ՍԱՀԱԿ.—Նրանք չուզեցին... Գրի-
գոր աղան ասաց, որ գործեր ունի:

ԹԵՐԷԶԱ.—Ուրեմն ես էլ գնամ:

ԱԼԷՔՍ.—Ինչո՞ւ. դուք մեզ մօտ մնա-
ցէք:

ՄԱՐԳՕ.—Այո, մնա, Թէրէզ. յետոյ
ծառան քեզ կը տանի:

ԱԼԷՔՍ.—Ինչո՞ւ, ես ինքս կը տա-
նեմ... Ուրեմն մնում էք:

ԹԵՐԷԶԱ.—(Ժպտալով նրան) Էլ ի՞նչ
արած. որ այդպէս էք ուզում...

ԱԼԷՔՍ.—Շնորհակալ եմ... (Հօրը)
Հայր, իմաց տուր երգչին, թող մեզ
մօտ լինի այս երեկոյ... (Թէրէզային)
Դուք էլ սիրում էք այդ երգերը: Ես
չա՛տ եմ սիրում և չա՛տ էլ կարօտել եմ...
Նրանց մէջ խոր զգացմունք կայ...

ԹԵՐԷԶԱ.—Ե՛ս էլ սիրում եմ. մի քա-
նիսներն էլ ինքս երգում եմ... Բայց
լսենք՝ տեսնենք ի՞նչ է երգում...

(Երգը մօտենում է: Երգում են Յ. Յով-
հաննիսեանի «Արաղն եկաւ լափին տալով»
երգը: Բոլորը լուռ՝ լսում են: Ալէքսանը հա-
մարեա սիրալիր՝ կպել է Թէրէզային եւ սա
ետ չի քաշում: Սահակը մէկ-մէկ նայում է
եւ ժպտում: Մարգոն էլ նայում է, յետոյ բո-
ծում հօրը, որ նայի, եւ լուռ՝ ծիծաղում է):

(Երգը շարունակում է երաժշտութեան հետ,
եւ վարագոյրը կամաց-կամաց իջնում է):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



ԵՐԿՐՈՐԴ ԵՐԱՐԻԱԾ

Մանուկեաններն այգին. ամառայ վերջերն է: Բեմի աջ կողմից մի քանի աստիճաններ եւ մի դուռ՝ տանում է դէպի ներսը: Դռան երկու կողքին՝ ծառեր: Սանդուխքի միւս կողքից՝ ծաղկանոց, դէպի խորքը: Բեմի առաջ՝ նստարան. քիչ հեռու, ձախ, մի սեղան, որի վրայ կայ ուտելիք, քաժակ: Սեղանի մօտ՝ աթոռներ: Խորքում մի կարճ ցանկապատ՝ մէջտեղը մեծ դարբաս: Յանկապատի միւս կողմը փողոցն է: Հորիզոնում երեւում են անտառ ու լեռների ստեղծագծեր: Կէսօր է:

1) ԲԱՂԴԱՍԱՐ-ԱՄԻ, ԶԱՔԱՐ, ՄԱՐԳԱՐ, ՍԵՐՈՒՅ, յետոյ՝ ԿԻՐԱԿՈՍ.

ԲԱՂԴԱՍԱՐ-ԱՄԻ (Հրում է այգու դուռը եւ զգոյշ՝ ներս մտնում: Ետեւից երեւում են միւսները: Զորս կողմն են նայում ամենքը, յետոյ ներս են գալիս) Ըստեղ չի... Ներս գնանք:

ԶԱՔԱՐ.— (Առաջ է գալիս) Ինչի՞ չէ. խնդիրը ունենք. փող ենք տալու... (Համարձակ գնում է դէպի տան դուռը):

ՄԱՐԳԱՐ.— Կաց, տօ. Կիրակոսին ձէն տու... Էշ խօ չէ՞նք, որ բիրդան ներս ընկնենք:

ՍԵՐՈՒՅ.— (Քայլում է դէպի տան դուռը) Կացէք ես ձէն տամ...

ԿԻՐԱԿՈՍ.— (Տան զոնից երեւում է, սրճամանը ձեռքին: Երբ տեսնում է գիւղացոյ՝ խստութեամբ) Հը՞, Բնչ ա. Բնչ էք ուղղում:

ԶԱՔԱՐ.— Աղին մէկ ձէն տամ, քեզ մատաղ:

ԿԻՐԱԿՈՍ.— Ո՞ր աղին:

ԲԱՂԴԱՍ.— Ալէքսան բէգին... Գործ ունենք:

ԿԻՐԱԿՈՍ.— Հրէն ինքը կը գայ հիմի... Սուգիւմը գործ ունիք:

ՄԱՐԳԱՐ.— Հա, իմը սնդի գործ ա:

ԲԱՂԴԱՍ.— Ես էլ եկայ, հանց որ...

Ասում են, եսնի Ալէքսան բէգը... հանց որ... զակօն ա գտել ասում են... որ բան ա, վէքսիլով պարտքը կարանք չը տանք:

ԿԻՐԱԿՈՍ.— (Յած է դնում սրճամանը եւ ծիծաղում) Ո՞նց... Բա որ ըտէնց ըլէր, առաջ հազը էք զակօնովը իմ վէքսիլը կը ոչնչացնէր... Լաւ են էշացրել քեզ, ամի... ԶԱՔԱՐ.— Դէ ամիս մեղաւոր չի... Բեաշալ Մարտիրոսն ա ասել... Հալբաթ ծիծաղած կըլի:

ԲԱՂԴԱՍ.— Բա ինչպէս անենք, քեզ մատաղ... Բա թողամ, հանց որ... Բնչս էլ խլի... Էս տարի խօ բերքիս կէսն էլ կը տանի:

ԿԻՐԱԿՈՍ.— Ո՞վ. Գրիգոր աղան... (Մտնում է խորհրդաւոր) Թէ խելք ունիս, ամի, անսաս տեղդ գնա. Գրիգոր աղան ուղղւմ ա Ալէքսան բէգին իրան փեսայ շինի... իմացար...

ԲՈՒՈՐԸ.— Բժ... Ղորդ...

ԶԱՔԱՐ.— Լսել եմ: Սրանց ասում էի՝ չէին հաւատում... Տեսար, Բաղդասար-ամի. դէ հիմի բնչդ էլ գնաց, դու էլ հետը:

ԲԱՂԴԱՍ.— (Գլուխն է երերցնում) Բա ասում էին՝ Ալէքսան բէգը ուղղւմ անած մարդ ա, գեղացու ցաւը գիտի, արդարութեան կողմը կը բռնի...

ՄԱՐԳԱՐ.— Դէ արդարութիւնն էլ էն ա, որ մարդ իր աներոջը դատաստանի չի քաշի, էլի... Բա չէս իմանում, որ երկու տեսակ արդարութիւն կայ:

ԲԱՂԴԱՍ.— Էդ խօ արեւկատ Մարտիրոսը դառաւ... Փող չունեցողի համար—ասում ա—ուրիշ արդարութիւն, հարուստի համար՝ ուրիշ: (Գլուխն է երերցնում) Բա ինձ ասել են, թէ օրէնքը ամենքի համար մէկ ա...

ԿԻՐԱԿՈՍ.— Մէկ լինելը՝ մէկ ա. ամա արի տես, որ ինձ ու քեզ համար օրէնքով շարժողները մէկ չեն... Ամա դու գիտես. կուգես՝ սպասիր. հիմի աղէն կը գայ:

ՍԵՐՈՒՅ.— Ես էլ խնդիրը ունեմ...

ԿԻՐԱԿՈՍ.— Քոնը իմանում եմ... (Գնում է դէպի դուռը) Մի քիչ ըտեղ կացէք, էն ա՛ կը գայ...

2) ՆՈՅՆՔ ԵՒ ԱԼԷՔՍԱՆԴՐ.

ԱԼԷՔՍ.— (Ամառայ հագուստով, զուլեք բաց, մոտնում է տան դռնից) Հա... Գիւղացիք են... (Մտնում է) Բարե ձեզ: Երեւի ինձ հետ գործ ունիք:

ԲԱՂԴԱՍ.— Հրամանք ես, Ալէքսան բէգ... Սնդի գործ...

ԱԼԷՔՍ.— Լաւ... համեցէք նստէք... (Կիրակոսին) Ո՞ւր ես գնում. ինձ համար կօֆէ բերիք:

ԿԻՐԱԿՈՍ.— Է՛ն ա բերել եմ... Մարգարեւը կը գայ՝ կը լցնի (Գնում է):

ԱԼԷՔՍ.— (Նստում է նստարանի վրայ) Համեցէք, նստէք:

ԶԱՔԱՐ.— Վնաս չունի, աղա. ըսէնց էլ լաւ ա:

ԱԼԷՔՍ.— Չէ, ինչո՞ւ... Ա՛յ, էն աթոռները առէք... Եւ կամ մէկդ հէնց այստեղ, կողքիս նստէք... Ի՞նչ է, քաշում էք... Ձեր գիւղացին չե՞մ. թէ՛ ես եադ եմ ձեզ համար:

ՍԵՐՈՒՅ.— Ինչի՞ եադ, քեզ դուրբան. մեր Սահակ բէգի տղան չէս. մեր քուչէքումը, մեր տներումը բի՛չ ես խաղացել...

ԱԼԷՔՍ.— Հա... Աւելի լաւ... Մենք բոլորս էլ մի երկրի զաւակներ ենք եւ եղբայրներ: Ի՞նչ անենք, որ ես Մոսկով եմ գնացել... Խօ էլ ըստեղացի՛ եմ, գիւղացի եւ ձեր ընկերը... Նստի՛ր, Բաղդասար-ամի. դու խօ եադ չէս. հօրս հասակի մարդ ես... Ա՛յ, այստեղ, կողքիս նստի՛ր... Դու էլ գործ ունես սուգումը...

ԲԱՂԴԱՍ.— (Նստում է կողքին եւ սկսում է համարձակութիւն ստանալ) Դէ Բնչ անենք, Ալէքսան բէգ, քեզ մատաղ... Դիւնջ թողնում են որ... Ես սուգումը գործ չունիմ, չէ... Իմը ուրիշ բան ա...

(Միւս գիւղացիք, մէկը աթոռի, միւսն ըն)

ուղղակի գետնի վրայ նստոտում են):

Ա.Լ.ԲՄ.—(Բաղրասարին) Վնաս չունի, առաջ գնա ասա... Ի՞նչ է, չը լինի՞ առնելիք ունիս սրանից-հրանից և ուզում ես հաւաքել, որ հոգեբաժին շինես... (Ծիծաղ: Միւս գիւղացիք էլ ծիծաղում են: Առ հասարակ ամենքը սկսում են բացել հետդհետէ):

ԶԱՔԱՐ.—Ա՛յ քեզ մատաղ, Ալէքսան բէգ, ի՞նչ լաւ արիր, որ եկար... էն անիրաւ քեռայալ Մարտիրոսից մեզ կազատես... Դադարում է, դադարում... Զակօնը, դէ, իրա ձեռքումը, հակացողն էլ՝ ինքը... Դէ, մենք էլ միա-սիտ, անգէտ... Պոկում ա ու պոկում, ու գեռ մեզ էլ անիրաւ դուրս բերում... Աստուած քեզ օրհնի՛ որ եկար. որ իմանաս, սաղ գեղը քեզ օրհնում ա...

Ա.Լ.ԲՄ.—Լաւ, լաւ. շնորհակալ եմ... Ես էլ ձեր գիւղացին եմ, չէ՞. իմ պարտքն է ձեզ օգնել, ձեր ցաւերի մասին աշխատել, չը թողնել՝ որ ձեզ խաբեն... Համ էլ, օրէնքը որ կայ—ամէնքի համար է: Բանն այն է, որ էդ օրէնքները ձեզ ծանօթ չեն... Ի՞նչ որ է՝ դոչաղ կացէք. բանի ես կամ—ոչ որ չի կարող առանց օրէնքի բան բռնել ձեր գէմ...:

ԲՈՂՈՐԸ.—Ա՛յ Աստուած քեզ օրհնի... Ա՛յ դու ողջ կենաս... Աստուած երկար կեանք տայ...

Ա.Լ.ԲՄ.—Շնորհակալ եմ... (Բաղրասարին) Դէ, ամի, ասա տեսնենք. գործի ի՞նչ է. առնելիք ունիս, չէ՞...

ԲԱՂԴԱՍ.—Ձէ-հա, քեզ մատաղ. որ ասես՝ պատանքի փող էլ չունիմ... Նլա պարտքն էլ վզիս... Լսել եմ եանի որ... հրամանքդ զակօն ես գտել... հանց որ... վէքսիլով պարք ըլեմ մէկին... մէկ ընենց մարդու, էլի... Որ եանի էդ վէքսիլով 100 մանէթ առած ըլիմ ու 150 գրած ըլի... որ էս

երկու տարի էլ բաղիցս տամ, ցորենիցը տամ, եղիցը տամ... ու էլ հետ 200 մանէթ պարտք ըլիմ... Լսել եմ եանի որ... էդ զակօնովը, հրամանքդ էնպէս կանես, որ կազատես ինձ էդ Աստուած պատժիցը...

Ա.Լ.ԲՄ.—(Ժպտում) Սպասիր... Ուրեմն դու պարտք ես առել միայն 100 բուրլի...

ԲԱՂԴԱՍ.—Հա, քեզ մատաղ. Աստուած էլ գիտի, (Գիւղացոց ցոյց տալով) սրանք էլ գիտեն... Մէկ տարի բաղք բերք չը տուաւ, տոբը պիտի տայի...

ԶԱՔԱՐ.—Ա՛յ Բաղրասար-ամի, եանի զո՞ւր չես խօսում. էդ խօ ըլելու բան չի. առել ես—պիտի տաս...

Ա.Լ.ԲՄ.—Ի հարկէ, ի հարկէ, առել ես—պիտի տաս... Բայց դու ասում էիր թէ 200 մանէթ է դարձել պարտքդ. հա՛:

ԲԱՂԴԱՍԱՐ.—Տոկոս եմ տւել, տոկոս... 100 մանէթը երբ առայ, չէր տալիս՝ մինչև 150-ի տակ ձեռք չը քաշեցի... Բաղից—բանից էլ՝ հարուրից առել տւած կըլիմ... Ես տարի վէքսիլը թաղացրեց—չը կարացի տալ—150-ը 200 շինեց... (Գիւղացոց) Ըսէնց չի, ախախտ. դուք ու ձեր Աստուածը, սո՛ւտ եմ ասում:

ԲՈՂՈՐԸ.—Դորդ ա, ըսէնց ա...

Ա.Լ.ԲՄ.—(Գլուխն է երեքնում) Հը՛մ... վէքսիլի մէջ խօ չի՞ գրած, որ հարիւրը տոկոսն է:

ԶԱՔԱՐ.—Բա գրած կըլի. գիժ խօ չի: Ինչի՞, մենք չէ՞նք իմանում, որ զակօնով էդքան տոկոս չի ըլի... ամա որ նեղն ա լծում. դու էլ որ պէտք ես ունենում...

ԲԱՂԴԱՍ.—Հա, քեզ մատաղ, նեղն ա լծում... Ասում ա՛ էս ա, կուգես—տամ... Որ վէքսիլն էլ չես ուզում թաղացնի—գալիս բողազիդ ա չորում, ուզում ա սուղը տայ, տունդ ու տեղդ խի...

Ա.Լ.ԲՄ.—Սպասիր... Դու ասացիր, որ 150 բուրլու էր առաջին վէքսիլդ, երբ թաղացրիր... Իսկ հիւնը ես տւած քեզ, երբ երկրորդը առաւ:

ԲԱՂԴԱՍ.—Ձէ... ընչի՞ որ... Կըլի որ ձղած ըլեմ... հա ամա. միտա ա, ի՞նքը հէնց ինձ մօտ ձղեց ու քցեց...

Ա.Լ.ԲՄ.—(Գառն ժպտով) Խաժուժիւն ես արել, ամի... Բայց տեսնենք, առաջ մէկ ասա, որի՞ն ես պարտ...

ԲԱՂԴԱՍ.—(Շփոթւած եւ լուռ քիչ, միւսներին է նայում) Սկի... չես ճանաչիլ...

Ա.Լ.ԲՄ.—(Որ նկատում է գիւղացոց շրփոթւելը) Հը՛, էդ ո՞վ է, որ դժւարանում էք անւանել... Պիտի ասէք, որ գործ սկսեմ, թէ՞ չէ... (Յանկարծ մի բան յիշելով, ոտքի է ննում, ուշադրութեամբ նայում է գիւղացոց, դէմքը մոայլում է. խիստ) Չը լինի՞ էլի...

ԲԱՂԴԱՍ.—(Ոտքի է ննում, վախեցած) Մի նեղանալ, քեզ մատաղ... Ես յիմարացայ... Որ իմացայ—մտածեցի թէ՛ ուսում առած մարդ ես, կըլի որ արդարութեան կողմը պահես...

Ա.Լ.ԲՄ.—(Աւելի խիստ) Ուրեմն նա է, Գրիգոր աղան...

ԲՈՂՈՐԸ.—(Որ կանգնած են, լուռ՝ գլուխները խոնարհեցնում են: Քիչ լուռ):

Ա.Լ.ԲՄ.—Շատ լաւ ես մտածել, Բաղդասար-ամի, որ եկել ես ինձ մօտ... Այդ գործը թէ՛ն դժւար է, թղթեր չունես, փաստ չը կայ—բայց ես վերցնում եմ ինձ վրայ... Գիւղացիք վկայ կը կանգնեն:

ԶԱՔԱՐ.—Ով ասես... Ո՛ղջ գեղը վկայ:

ՍԵՐՈՎԲ.—Բոլորս վկայ ենք... Դադեց մեզ ախր էդ մարդը. ամենիս տունն էլ քանդեց:

ԲԱՂԴԱՍ.—Օրհնւիս դու, Ալէքսան բէգ. թէ էդ մարդին մէկ ընէնց, էլի,

ոլորես, սուղի տակ քցես—սաղ գեղը կազատես, մեր փրկիչը կը դառնաս...

3) ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

ՄԱՐԳՕ.—(Վազելով ներս է գալիս) Ուշացայ, չէ՞, Սնշա... (Տեսնելով գիւղացոց՝ կանգ է առնում) Սրանք ինչ են ուզում:

Ա.Լ.ԲՄ.—Գործ ունին ինձ հետ... Կօֆէն շինիր և գնա:

ՄԱՐԳՕ.—Իսկ Թէրէզը... Շլեւապան էր հանում, որ այստեղ գայ:

Ա.Լ.ԲՄ.—Թէրէզը... Շուտ, ներս գնա և մի կերպ պահիր՝ մինչև սրանք գընան... Շուտ կը վերջացնեն... Այստեղ մի գաք. գնա...

ՄԱՐԳՕ.—(Զարմացած նայում է նրան, յետոյ կամաց-կամաց՝ ներս գնում):

ԳԻՒԴԱՅԻԲ.—(Թէրէզի անունը լսելիս՝ իրար են նայում, յետոյ փափալ սկսում):

ԶԱՔԱՐ.—(Մարգոի գնալուց յետոյ) Քեզ մատաղ, Ալէքսան բէգ, չը նեղանաս: Դէ մենք էլ գիտենք, որ Գրիգոր աղային դժւար ա կաշիւը... Էլի ինչքան չըլի՛ զօւրա ա, փող շատ ունի:

ՄԱՐԳՕ.—Համ էլ մեր նեղ օրերին էլի նա ա հասնում...

Ա.Լ.ԲՄ.—(Բարկացած) Լռեցէք, այդ ինչեր էք ասում: Ինչպէս թէ զօրա է, փող շատ ունի... Թող ունենայ: Արդարութիւնը՝ ոյժ, հարստութիւն չէ՛ ճանաչում. նա մէկ է ամենքի համար: Ասացի ձեզ. երկու ամսից աւելի է այստեղ եմ և օր չեղաւ, որ նրա անիրաւութիւնների մասին նոր բաներ չը պատմեն ինձ... (Բաղրասարին) Գործդ ես կը վերցնեմ, ամի: Ո՛չ մի կոպէկ էլ չեմ առնիլ քեզնից... Ժամանակ է գիւղն ազատելու այդ հրէշի ձեռքից... (Զարարին) Իսկ դու ինչ գործ ունիս. բո՛նն էլ պարտքի, տալիքի գործ է:

ԶԱՔԱՐ.—Բաղս խլում են, Ալէքսան Բէգ. գործը հրէն սուղումը. որդիքս կը կոտորեն քաղցածութիւնից:

ԱԼԷՔՍ.—Ո՞վ է, դժբախտ Գրիգոր աղան:

ԶԱՔԱՐ.—Չէ, քեզ մատաղ, Աւետի-սանց Գափրէլն ա...

ԲԱՂԴԱՍ.—Սո՛ւտ ա, ա խալխը, սո՛ւտ ա... Ես ձեզ ասել եմ ու կասեմ, որ Գափրէլը սկի կոպէկ չունի, ռոտեղից քեզ 500 մանէթ տուաւ... Ելի՛ր Գրիգոր աղան ա... Այ կը տեսնէք. բաղիդ վը-րայ աչք ա տնկել, ու Գափրէլին ա մէջ քցել...

ԱԼԷՔՍ.—(Մարգարին եւ Սերոբին) Իսկ դձուր ինչ գործ ունիք... (Յիշելով) Հա... ձեր խնդիրը պատրաստել եմ... Ուղա-ծըս թղթերը բերի՛ք:

ՄԱՐԳԱՐ.—(Հանում է ծոցից թղթեր եւ տալիս է) Հրէս, բերել ենք...

ԱԼԷՔՍ.—(Ստնում է) Լաւ... Երբ գոր-ծը կը նշանակւի, ձեզ էլ իմաց կը տամ... Ապահով եղէք. իրաւունքը ձեր կողմն է:

ՍԵՐՈՐ.—Այ Աստուած քեզ օրհնի... Բաս մենք կը պրծնենք, էլի...

ԱԼԷՔՍ.—Անպատճառ:

ԶԱՔԱՐ.—Բաս իմ գործը ոնց ա-նենք, Ալէքսան Բէգ:

ԱԼԷՔՍ.—Քո գործն էլ ես կը վեր-ցնեմ: Ի հարկէ դու էլ վկաներ կու-նենաս... Մի քանի օրից էլի եկէք. ես մէկ տանուտէրի հետ կը խօսեմ, յե-տոյ ձեզ կանչել կը տամ:

ԲԱՂԴԱՍ.—Բաս գնանք, խալխը: Աստուած մեր Ալէքսան Բէգին մեզ հա-մար սնդ պահի:

ԱԼԷՔՍ.—Միշտ եկէք ինձ մօտ ա-ռանց քաշելու՝ երբ գործ ունենաք: Մէկ էլ՝ այսուհետեւ առանց ինձ հարց-նելու սկի ձեռք չը քաշէք վէքսիլի, կամ ուրիշ թղթի... Եզ քեաշալից էլ

զգոյշ կացէք. ասում են, որ Գրիգոր աղայի մարդն է... (Քաղցասարին) Ա՛մի... (Ջաքարին) դո՛ւ էլ. էս երեկոյ եկէք ինձ մօտ՝ խնդիրներդ գրեմ եւ մտածենք թէ ինչ պիտի անենք... Մէկ 5—10 վկա-ների անուններ էլ բերէք... Գրիգոր աղան չը լինի՝ ով ուզում է լինի—եթէ անիրաւ է, ձեռքիցս չի պրծնիլ. միայն թէ՛ վկաներ...

ԲՈՂՈՐԸ.—Ամենքս, ողջ գիւղը...
ԱԼԷՔՍ.—Շատ լաւ ուրեմն... Չը փախէք, այ... իմացէք, որ արջին թէ բռնեցինք—էն ա բռնել ենք: Թէ ձեռ-քից բաց թողենք—վայն եկել ու ձեզ տարել է յետոյ:

ԲԱՂԴԱՍ.—(Ուրախ) Բաց չենք թող-նիլ Աստծով... Աստուած քեզ օրհնի... Թէ բաղս ու տունս ազատեցիր՝ ըն-տանիքով օրհնող կըլենք:

ԱԼԷՔՍ.—(Նրա ուսը ծեծելով) Լաւ, լաւ, ա՛մի: Օրհնիր դու, որ յաջող տանենք գործը: Թէ չէ՝ շատ էլ հեշտ չի այդ արջին թալակ քցելը... (Սպառնալից) Բայց որ քցեցինք, էէ...

ԲԱՂԴԱՍ.—Այ դու շատ ապրես... Էն սուրբ խաչը քեզ օգնական...

(Քարեմաղթութիւններով եւ ուրախ խօսակ-ցելով՝ բոլոր գիւղացիք դուրս են գնում):

4) ԱԼԷՔՍԱՆԴՐ (մեհակ), յետոյ՝ ՍԱՀԱԿ.

ԱԼԷՔՍ.—(Մի րոպէ լուռ եւ խորհուն՝ նա-յում է գիւղացիների ետեւից, յետոյ կամաց-կամաց գնում եւ սուրճ է լցնում):

ՍԱՀԱԿ.—(Տան դռնից հանդարտ ներս է գալիս. պահ մի գնում է հեռից որդուն, ա-պա սանդուխքից իջնում է) Մեհակ ես, Սաշա:

ԱԼԷՔՍ.—(Դառնում է դէպի նա) Մե-հակ եմ... Բան ունիս ասելու:

ՍԱՀԱԿ.—Մարգոն ասում էր, որ գիւղացիներ կան եւ դուն նրանց սը-գեկեցիր գալ քեզ խանգարելու:

ԱԼԷՔՍ.—Գնացին... Եկել էին գան-գատի... վաշխառուների մասին էր դարձեալ... (Խիստ) Դարձեալ նա է, հայր, միշտ այդ մարդը...

ՍԱՀԱԿ.—Մ՛ս... Թէրէզան ներսու-մըն է... Գրիգոր աղայի մասին է խօս-քըդ, չէ... Տեսայ, Բաղդասար - ամին կար եկողների մէջ... (Տխուր) Թշառ ծերունի...

ԱԼԷՔՍ.—Ուրեմն դո՛ւ էլ գիտես թէ նա ինչ է արել ծերունուն: Եւ ինձ չէիր ասում... Ո՛չ, հայր, վճռել եմ ձեռքուս հղած բոլոր փաստերի հի-ման վրայ՝ կուր ելնիլ նրա գէմ, գիւղը միանգամով ազատել, վերջ տալ նրա արածներին...

ՍԱՀԱԿ.—Կամաց խօսիր, որդի... Նստիր, նստիր մէկ այստեղ: (Նըս-տում է):

ԱԼԷՔՍ.—Այսպէս էլ լաւ է: Սա-տիկ վրդովւած եմ... Հարիւր ըուրի տալ, երկու տարի մեծ տոկոսներ առ-նել, յետոյ էլ երկու հարիւր ըուրլու պահանջ դնել, ծերունու եւ նրա ըն-տանիքի ապաւէն այգին խլելու ելնել... Ինչի՞ նման է սա: Մէկ չէ, երկու չէ... Ամբողջ մի ամիս է՝ ինչ հարստա-հարութեան պատմութիւն եմ լսում—միայն եւ միշտ այդ մարդն է երևում մէջտեղ, իր սարգային արիւնհոտ ձի-րաններով: Ո՛չ որք չէ խնայել, ոչ ոքի...

ՍԱՀԱԿ.—(Լուռ եւ զուլար խոնարհած) Այո՛...

ԱԼԷՔՍ.—(Աւելի բորբոքւած) Մեզ բարեկամութիւն է ցոյց տալիս, ըզ-գում է, որ պիտի բացւէր ինձ համար նրա աղտոտ գէմը, գիւղացիք պիտի դիմէին... Եւ կամենում է իր խոս-

տուհներով՝ յորդորել ինձ հեռանալու գիւղից, արգելք չը լինելու իր խայ-տառակութիւններին... Բայց, ո՛հ, նա ինձ լաւ կը տեսնի եւ լաւ կը զգայ... Չը պիտի հեռանամ ես. պիտի մնամ եւ նրան քշել տամ այս կողմերից...

ՍԱՀԱԿ.—Սաշա, ի սէր Աստծոյ, ինչե՛ր ես ասում. մտածիր մէկ:

ԱԼԷՔՍ.—(Միշտ բորբոքւած) Մտածե-լու պէտք չը կայ... Երգել եմ ես արդարութեան կողմը լինել: Ես դրս համար եմ ուսել... Ինքդ էլ տեսնում ես. թշառների դառն քրտինքով է հարստանում այդ մարդը. ճգմում է ամենքին. կրակ դրել՝ գիւղն է վա-ռու... Էլ որ օրւայ համար ուսում առայ. ինչո՞ւ բերնիցդ զրկեցիր եւ փող ուղարկեցիր ինձ՝ որ արդարութիւնը պաշտպանելու համար զինեմ ու գի-նավարեմ...

ՍԱՀԱԿ.—(Միջահատում է) Սպասիր, Սաշա, մի տաքանալ... Ախր որ ամեն բան չը գիտես... Գուցէ սո՛ւտ են ա-սում, թշնամութիւն անում... (Տխուր եւ ինքը իր համոզմանը դէմ) Ո՛խ, գուցէ, գուցէ... Բայց ինչ ասեմ... Հոգուս ինչո՞ւ մեղք բառնամ... Ճիշտ են, ճիշտ՝ բոլորը...

ԱԼԷՔՍ.—Ահա, տեսա՞ր... Դո՛ւ էլ ճշտում ես ուրեմն: Ես չեմ հասկանում դրանից յետոյ, թէ ինչո՞ւ երկու շա-բաթից ի վեր դու արգելում ես ինձ նրա դիմակը պատուելու, նրան դա-տարան քարշ տալու, ճգմելու եւ ոչըն-չացնելու...

ՍԱՀԱԿ.—(Յուսահատ) Սպասիր... (Յուզւած ելնում է, տրորում ցականութեամբ: Յե-տոյ յանկարծ շուրջն է նայում, վարանում է եւ հոսկ ուրեմն վճռականօրէն մօտենում է որդուն, բռնում նրա թեւից ու խոսքոտ շշուկով) Լսիր, Սաշա... Ո՛չ, այլևս չեմ կարող ծածկել... Լսիր ինչ կասեմ...

Ե՛տ կաց այդ գործից, հանգիստ թող Գրիգոր աղային... (Աւելի յուզւած) Եւ կամ, որն աւելի լաւ է, գնա քաղաք. թող գիւղը, թող. խնդրում եմ քեզ, աղաչում եմ—թող...

Ալէքս.—(Ետ է քաշուում զարմացած) Ինչպէս, թողնեմ գիւղը... Գնամ... Ձանձրացրի՞ ձեզ արդէն, ինձ վաճառում ես...

ՍԱՀԱԿ.—(Նեղացած) Ախ, չէ, որդիս, չէ. Աստուած գիտի որ չէ... Ինձ էլ, մեզ էլ հետդ տար: Գնա գործերդ կարգի գիր՝ մենք էլ գանք... Հերիք է այստեղ... է՛լ չեմ կարող...

Ալէքս.—Բայց ինչո՞ւ, ի՞նչ է եղել... Ինչո՞ւ ես թագցնում որդուցդ, ի՞նչ կայ... (Քննում է հօր թելիցը եւ քիչ լուռ՝ սպասում. յետոյ՝ խիստ) Խօսիր, հայր, ուզում եմ իմանալ վերջապէս... (Քիչ լուռ, յետոյ ծիծաղելով) Կամ գուցէ վախենում ես... որ յաղթեմ, նա արդար դուրս գայ և ինձ անպատեւի... (Քրքիչ) Ինչ վախճան ես եղել, հայր... (Փաշ) Մի վախճան, իմ կողմն է արդարութիւնը թէկուզ և յաղթեմ ես, լուցի՛ են ինձ... Բայց ես կը խօսեմ ամեն կերպ, կը գոռամ... Եւ վերջապէս՝ խառն չեմ ես, գիտեմ օրէնքները, փաստեր ունիմ...

ՍԱՀԱԿ.—(Աւելի յուզւած) Չէ, չէ... այդ չէ... (Նստում է եւ զուխը ձեռքերի մէջ առնում: Մի վայրկեան լուռիւն է):

Ալէքս.—Հայր...

ՍԱՀԱԿ.—(Գլուխը քարծրացնում է եւ պղտոր հայեացքով նայում):

Ալէքս.—(Ծանրակշիռ) Խօսիր, հայր... Ի՞նչն է քեզ ստիպում պաշտպանել նրան... Չը լինի՞ դու էլ, գիւղացուց նման, մտածում ես թէ... Խօսիր վերջապէս, հայր... (Վտանում է եւ կողքին նստում) Ուրեմն այդ չէ քո պաշտպանութեան պատճառը, չէ...

ՍԱՀԱԿ.—(Վճռականօրէն) Ո՛չ, այդ չէ... Եւ որտեղից հանեցիր, որ ես նրան պաշտպանում եմ... Աստուած էլ գիտէ, մարդիկ էլ գիտեն, որ նրա ոչ մի գործի մէջ չը կայ արդարութիւն. որ այդ հարստութիւնը դիզւած է՝ խեղճերի կողոպտելով... Ես չեմ պաշտպանում, ոչ. բայց ես ինքս, մենք, դու, մայրդ և քոյրդ... բոլորս էլ նրա ձեռքի մէջն ենք...

Ալէքս.—(Վեր է թռնում տեղից) Ինչպէս... Մենք, նրա ձեռքի մէջ... (Յանկարծ հասկանում է) Ուրեմն դու... դու պարտք ունիս նրան... Պարտքեր ունիս դու... և այն էլ նրան... (Յուզմամբ) Ո՞րքան է. և ինչո՞ւ... (Աւելի յուզւած եւ յուսահատ) Նրա ձեռքի մէջ... Ես, բոլորս... (Հօրը) Իսկ դու փող չունիս, չունիս նրան տալու... Եւ շատ է այդ պարտքը...

ՍԱՀԱԿ.—Հինգ հազար:

Ալէքս.—(Սոսկումով) Հինգ հազար... Բայց ինչո՞ւ, ի՞նչը ստիպեց քեզ պարտք անելու... Եւ ինչո՞ւ ինձ չէիր գրում այդ ամենը... (Յուսահատ) Ախ, հայր, հայր, այս ինչ դրութեան մէջ ես ձեռքում դու ինձ...

ՍԱՀԱԿ.—(Մեղմ, յանդիմանական) Սաշա... (Ոտքի է ելնում) Լսիր ինձ: (Վտանում է) Իսկ դու ինչով ուսար: Պակասեց երբեք քո փողը այս չորս տարւայ ընթացքում: Երբեք դու մերժումն ստացար, երբ փող ուղեցիր... Իսկ այդ գումարների մեծ տոկոսները, տոկոսների տոկոսները...

Ալէքս.—(Րնկմամբ՝ զուխը խոնարհեցնում է) Իրաւունք ունիս, հայր... Ներիր ինձ. ես չէի մտածել. կարծում էի՝ փող ունիս, եկամուտ ունիս այգիից...

ՍԱՀԱԿ.—Այգին հէնց առաջին տարւանից գրաւ է նրա մօտ. արդիւնքի կէսը գրեթէ՝ տոկոսի է գնում... Տունն է անցնալ տարի՛ գրաւ առաւ...

Ալէքս.—(Լիովին ընկճւած) Ամէն ինչ կորսւած է այլ ևս... (Վռնում է ծառին յուսահատ: Երկուսն էլ լուռ են):

5) ՆՈՅՆՔ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԱՂԱ.

ԳՐԻԳՈՐ.—(Այգու փողոցի դուռը մեղմօրէն բաց է անում, ներս մտնում եւ հտեւից վրայ քաշում):

Ալէքս.—(Որ տեսնում է նրան, ցնցւում, ուղքի դալիս, զսպում է իրեն եւ սառը՝ մընում է անշարժ):

ՍԱՀԱԿ.—(Նոյնպէս նկատում է նրան: Ժողովում է իրեն եւ մընում է տեղում՝ անշարժ):

ԳՐԻԳՈՐ.—(Մի վայրկեան փոխն ի փոխ գնում է երկուսին էլ, յետոյ կեղծ ժպիտ դնելով, սիրալիր) Բարեւ ձեզ... Խանգաքեցի... Ասի՛ աղջիկս այստեղ է... Այս կողմերիցն էի անց կենում... (Վտանում է) Հը՞... Ի՞նչ է եղել. ախր էք... Չը լինի՞ կուէլ էք... (Մահալին) Երևի մի քիչ խիստ ես խօսել հետը. հը՞... Ձահիրի հետ խօսելը դեռ չես սովորել... (Ալէքսանին) Մի նեղանալ, սրբի. հայր է. միշտ որդոց լաւն են ուզում հայրերը... Համ էլ Սահակ բէգը խելօք մարդ է... (Նստում է) Նրան դու լսիր, դուր բաներ չի աւել...

Ալէքս.—(Շարժւում է տեղից եւ չոր) Սխալում էք, մենք չենք կուէլ:

ՍԱՀԱԿ.—(Տխուր ժպտում է) Է՛հ, ինչո՞ւ պիտի կուէլնք. խօսում էինք էնպէս... Հրամանոցդ չէինք սպասում...

ԳՐԻԳՈՐ.—Հա, տեսնում եմ... Ասի՛ մէկ մտնեմ, Սաշի քէֆը հարցնեմ... Բաս ուր է, մեր աղջիկը ձեզ մօտ էր եկել ախր... Ախպէր, էլ Թէրէզին պահել չի լինում: Չը գիտեմ, ինչ որ շատ է սիրել ձեռք... Մարգարիտին:

ԳՐԻԳՈՐ.—(Նրա վրայ է խօսում: Տեղիցը վեր է կենում թէ չէ—«Գընամ Մարգարիտի մօտ»... Ես թէ չէ՝—«Սերգո, գնա Մարգարիտին ասա՛ ինձ մօտ գայ»... Որ բան է, ըստեղ ընկաւ, էլ տուն վերադառնալ չը կայ...

6) ՆՈՅՆՔ ԵՒ ԹԷՐԷԶԱ.

ԹԷՐԷԶ.—(Տան դուռը բաց է անում, կիսովին երեւում եւ շուրջն է նայում. առանց զիարկի է) Գնացի՛ կն գիւղացիք... (Ներս է դալիս սանդուխքների զիւղից) Ֆհհհ, Ալէքսանդր Սահակիչ, ինչ վատ մարդ էք եղել, ճշմարիտ... Մի ժամ է, որ մեզ ներսը փակել էք... (Վտանում է եւ ձեռք է պարզում Ալէքսանին) Բարեւ ձեզ... (Հօրը) Դու էլ այստեղ ես, հայրիկ:

ԳՐԻԳՈՐ.—Բհհ, այ աղջի, մէկ ժամ է այստեղ ես և հոր ես տեսնում Սաշային... Չը լինի՞ դու էլ նոր ես գալիս:

Ալէքս.—Ներսն էին. ես այստեղ զբաղւած էի:

ԹԷՐԷԶ.—(Հօրը) Երեւակայիր, հայրիկ, մի ժամ է, որ այս անտանելի մարդը մեզ ներսում փակել է և արգելել պարտեղ իջնելու—թէ ի՞նչ է՝ մի քանի գիւղացիների հետ գործ ունի:

ԳՐԻԳՈՐ.—Ը՛մ, դա... Փաստաբան մարդ է, աղջիկս. ի հարկէ, չը պիտի խանգարել... Երևի գիւղացիները գործեր ունէին յանձնելու... (Ժպտելով) Ե՛ս էլ տեսայ նրանց ճանապարհին՝ այստեղից գնալիս... (Ալէքսանին) Բայց գիտե՞ս ինչ կասեմ քեզ, Ալէքսան բէգ. (Խրատական) Ինձանից քեզ խրատ չի համար, բայց, դէհ, որքան չը լինի, փորձւած, հօրդ հասակի մարդ եմ... Գիւղացիներին, որդիս, շատ էլ վստահել չի կարելի... Նախ որ՝ սկի ուղիղ բան նրանցից լսել չես կարող. էս՝ մէկ... Վրայ երկրորդ՝

որ նրանք ամեն բան մեծացնում են... (Ոտքի է եկնում) Լուսն՝ հեղտ են շինում... (Սահակին) Հը՞, Սահակ բէգ... Սաշան ջահիլ է, դու ասա. դու լաւ կը ճանաչես գիւղացոյց. ասածս ճիշտ չէ՞:

ՍԱՀԱԿ.—(Խոստափոխական) Ի՞նչպէս ասեմ... Ասենք՝ ի հարկէ...

ԳՐԻԳՈՐ.—(Խօսելով՝ հետզհետէ մօտենում է Սահակին) Մէկ էլ որ... Ա՛յ, դու էդ լաւ կը գիտենաս... Էդ գիւղացիք զահլա են տանում: Կը խօսան կը խօսան՝ բան չես հասկանալ... Վայ է՝ թէ ուրիշի կովը մի քիչ խոտ կռծեց իրենց այգու ծայրիցը: Իսկոյն գանգատ, դալմադալ... (Ժպտուն) Հիմի էլ խօ... Փաստաբան կայ գիւղումը, Ալէքսան բէգը գիւղացիների պաշտպանն է... (Նուրբ ծաղր) Էնպէս է անում, որ մարդ կարող է իր պարտքը չը տալ—թէկուզ մուրհակ տւած լինի, փող էլ առած... Ես լինչ գիտեմ... Որ լսես նրանց—կասես թէ Ալէքսան բէգը հրաշքներ գործելիս լինի... (Ալէքսանին) Ձէ, որդի, դու մեզ լսիր—շատ երես մի տալ դրանց. թէ չէ՝ ժամանակդ էլ կը խլեն ու ոչինչ էլ օգուտ չես ստանալ... (Սահակին) Հը՞, լաւ չէ՞մ ասում, Սահակ բէգ...

ՍԱՀԱԿ.—(Մեղմ) Դէ ի հարկէ, ձեր ասածն էլ ճիշտ է... Բանը շատ են մեծացնում, չնչին բանը՝ բան շինում:

ԳՐԻԳՈՐ.—Դու դրան էդ հասկացրու, էդ... Որ էդպէս, ամենքի առաջ դուրը բաց անի, ամենքին ապահով տայ—ողջ օրը պիտի չնչին գործերով զբաղուի... (Մտնում է Սահակի մեքը եւ խօսելով սկսում է հեռու տանել):

ԹԷՐԷԶ.—Դէ՛, այժմ յոյս ունիմ որ ազատ էք այլևս... Կարող եմ մնալ

այստեղ:

ԱԼԷՔՍ.—Ազատ եմ... Դուք գուցէ սովորեց կը կամենայիք... (Գնում է դէպի սեղանը):

ԹԷՐԷԶ.—Ո՛չ, թողէք. ես արդէն խմել եմ:

(Այդ միջոցին Սահակն ու Գրիգորը մտնել են պարտէզի խորքը եւ այլևս չեն երևում):

(Բեմի վրայ քիչ լուռ է: Ալէքսանը կրծքն է մի ծառի, մոայլ է, ակնարկը գետնին. Թէրէզան, նստարանի վրայ, երկար նայում է նրան):

ԹԷՐԷԶ.—Խօսեցէք... Բայց երևի դուք մտքով դեռ ես գիւղացիների հետ էք...

ԱԼԷՔՍ.—(Նայում է նրան եւ քիչ մօտենում) Դուք նեղանում էք... Այդ մարդիկ իրենց ցաւերն էին եկել պատմելու ինձ... Եւ որպիսի ցաւեր... Միթէ ձեզ չեն հետաքրքրում երբէք նրանց վշտերը:

ԹԷՐԷԶ.—(Թեթեւամտութեամբ) Է՛հ, Ալէքսանդր Սահակիչ, ինձ թւում է որ դուք երբեք ամեն ինչ շատ էք մեծացնում եւ սրտի մօտիկ վերցնում... (Ժպտելով) Հայրս դրան ասում է «զբըքերի քամիներ»... Ձեմ գտնում, օրինակ, որ գիւղացիք, յիշաւի, այնպիսի մեծ ցաւեր ունենան, որ պէտք լինէր ձեր ամբողջ ուշադրութեան ու ոգևորութեանը... (Նկատելով Ալէքսանի դժգոհ շարժումը) Դուք նեղանում էք ասածներիցը... (Քիչ լուռ) Լաւ ուրեմն. այո՛, գուցէ ես սխալ եմ... Ո՞վ գիտէ... Բացատրեցէք գոնէ... Ես գրեթէ ոչինչ, կամ սխալ գիտեմ այդ բոլորի մասին... (Լուռ) Ինձ միշտ կրկնել են, որ գիւղացիք լուսն հեղտ են շինում, լալկան են՝ թէկուզ հարուստ էլ լինեն... Կեղծում են, դիտմամբ աղքատ ձևանում, գանգատւում են եւ դժգոհութիւն յայտնում

անտեղի կերպով... Չը գիտեմ, ճշմարիտ, թէ որքան իրաւացի են այդպէս ասողները...

ԱԼԷՔՍ.—Ձեզ խաբել են, օրիորդ... Եւ այդ նրա համար են խաբել, որովհետեւ տեսել են, որ լաւ սիրտ ունիք, կարող էք յուզել անիրաւութիւնից... գուցէ մինչև իսկ բողոքել, աղմուկ հանել... Դուք էլ անձամբ չէք կարողացել եւ կամ չէք ջանացել իմանալու... (Քիչ լուռ) Բայց, եթէ կուզէք, ես, իբր նմուշ, մի քանի խօսքով նրանց ցաւերից մի ամենաթանրը պատկերացնեմ ձեր առջ...:

ԹԷՐԷԶ.—Խնդրեմ. շնորհակալ կը լինեմ... Յիշաւի, այժմ մտածում եմ, որ ես չափազանց տգէտ եմ մնացել եւ շուրջ կատարւած իրողութիւնների խորը թափանցելու չեմ ձգնել... Եւ դուք այնքան լաւ էք խօսում, որ... ինձ հաճոյք է ձեզ լսել... Դէ՛հ, խօսեցէք... (Թեթեւամտաբար՝ ծիծաղելով) Երևի սոսկալի բաներ էք պատմելու, չէ... (Կուկտաբար) Ա՛յ դուք ֆանտազիօր...

ԱԼԷՔՍ.—(Դէմքը կնճռելով) Ֆանտազիօր... Այդպէս էք համարում դուք ինձ:

ԹԷՐԷԶ.—(Ծիծաղելով) Այն հաստափոր Մատվէյ Եգօրիչն է ձեր մասին այդպէս խօսում:

ԱԼԷՔՍ.—Իսկ դժեք...

ԹԷՐԷԶ.—(Լրջանում է) Ե՛ս... ես միայն գտնում եմ, որ դուք... այո, չափազանց լուրջ էք եւ զգայուն... անպէս, Էլի... շատ խորն էք մտածում... Միթէ այդ լաւ է... (Լուռ) Ա՛յ, հէնց այս բոլորի էլ. այնպէս տխուր դէմք ունիք, որ կարծես մի ծանր բան է պատահել... (Տխուր) Ու ինձ էլ չէք ուզում մասնակցից անել ձեր ցաւերին... Եւ դեռ ասում էք, որ բարեկամ լինենք...

ԱԼԷՔՍ.—Ճշմարիտ է... Այո՛, այս բոլորի սրտիցս արիւն է հոսում...

ԹԷՐԷԶ.—(Վախեցած եւ բոլորովին լրջացած՝ գնում է դէպի նա) Ուրեմն իրաւ է, մի դժբաղդութիւն է պատահել ձեզ հետ... Ասացէք, ասացէք ինձ ձեր վիշտը...

ԱԼԷՔՍ.—(Տխուր, գլուխն է ցնցում) Ո՛չ... Դա ձեզ գուցէ չը հետաքրքրի... Մասնաւոր բան է...

ԹԷՐԷԶ.—Թող լինի, պատմեցէք ինձ եւս, ինձ էլ տխրեցրէք, ես էլ եմ ուզում տխրել ձեզ հետ, ուրախանալ ձեզ հետ... (Յուզւած իր ասածներից՝ դարձնում է գլուխը):

ԱԼԷՔՍ.—(Բռնում է նրա ձեռքը) Թէ՛րէ՛գ... Այ, որքան լաւն էք դուք... միմիայն դուք:

ԹԷՐԷԶ.—(Սեղմում է ձեռքը) Աւելի լաւացրէք ինձ... խօսեցէք, ամբողջ սրտովս լսում եմ ձեզ: (Չեղբ մեղմութեամբ հանում է եւ քիչ ետ քաշւում):

ԱԼԷՔՍ.—(Ստափւում է, զսպում իրեն. քիչ լուռ է) Խոստացայ ձեզ մի նմուշ պատմել գիւղացու անհուն վշտերից, մի նմուշ նրա կրած տանջանքներից. լաւ ուրեմն, խեցէք... (Լուռ) Ձեզ հաւատացրել են, օրինակ, որ նոքա աղքատ չեն ու աւելի հարուստ են, քան դուք... Եւ ես... որ նրանք անընդհատ գանգատւում են, սովորութիւն են դարձրել լալկանութիւնը... Բայց ոչ, օրիորդ, սուտ. սուտ են այդ բոլորը: Եթէ անձամբ մտնէք նրանց խոճիթները, տեսնէք նրանց կերածը, զգա՞ք նրանց կրած նեղութիւնները... Երբ տեսնէք, օրինակ, թէ ինչպէս վաշխառուն խլում է նրանց բոլոր ունեցածը իր պարտք տւած մի չնչին, բայց տոկոսներով խոշորացած գումարի փոխարէն... Մի խօսքով, եթէ տեսնէք նրանց այլևայլ անհաշիւ տանջանքները—կը

զարմանաբ, թէ մարդիկ ինչպէս կարող են այդքան տանջուել և բաշտութիւն ունենալ ապրելու... (Քիչ լուռ) Կուզէիք արդեօք իմանալ, նոյնպէս իբր նմուշ, թէ ինչ էին եկել ինձ պատմելու այդ գիւղացիները...

Թէ՛րէ՛ք.—Ասացէք...

Ալէ՛քՍ.—(Յուզւած, բայց վճռական) Նըբանցից մէկը, օրինակ, Բաղդասար-ամին...

Թէ՛րէ՛ք.—Ճանաչում եմ այդ ծերունուն: Յաճախ է մեր տուն գալիս. իւր, մածուն, հաւ է ընծայ բերում միշտ... Շատ բարի գիւղացի է...

Ալէ՛քՍ.—(Կռալ) Ահա այդ լաւ ծերունին, որ ընծաներ է բերում ձեզ—իր տանը, իր երեսխաններն ուտեցնելու հաց չունի... Այգին շուտով ձեռքիցը կը խլեն, կո՞ղմ էլ... որովհետեւ ինչ որ բերք է ունենում, ցորեն հնձում—մի մասը, մի մեծ մասը տալիս է ուրիշի...

Թէ՛րէ՛ք.—Սպասեցէք... Ես ձեզ չեմ հասկանում... Իսկ ինչո՞ւ է տալիս. հարկի փոխարէն, կամ գուցէ պարտքեր ունի...

Ալէ՛քՍ.—Այո, պարտք ունի... (Լուռ) Մէկից, մի ժամանակ, երբ նեղ օրումն է եղել, պարտք է վերցրել 100 ռուբլի, իսկ ստորագրութիւն է տւել 150 ռուբլու...

Թէ՛րէ՛ք.—Բայց ինչո՞ւ. եթէ 100 ռուբլի է վերցրել. ինչո՞ւ է 150 ռուբլու ստորագրութիւն տւել:

Ալէ՛քՍ.—Այլապէս՝ պարտք տուողը չէր համաձայնում տալ, իսկ ծերունին պէտք ունէր:

Թէ՛րէ՛ք.—Բայց դա խօ անիրաւութիւն է, անգթութիւն... Միթէ այդպիսի մարդիկ կան մեր գիւղումը:

Ալէ՛քՍ.—(Աւելի յուզւած) Դեռ լսեցէք... (Քիչ լուռ) Երկու տարի անդա-

դար, այդ խեղճ ծերունին իր պարտքատիրոջն է տարել տոկոսի փոխարէն—այգուց, ցորենից, իւղից... իսկ, վերջի վերջոյ, ստիպւել է մի նոր ստորագրութիւնով՝ 150-ը դարձնել 200-ի... Եթէ չանէր—կը խլէին նրա տուն ու տեղը, ամեն ինչը...

Թէ՛րէ՛ք.—(Աստիկ վրդովւած՝ ոտքի է հիմում) Բայց դուք սոսկալի բաներ էք պատմում... Երբ մտածեմ եմ... խեղճ Բաղդասար-ամին... Անշուշտ հայրս չը գիտէ այդ բոլորը. պիտի յայտնել, ապահով եմ որ կօղնի թշուառին...

Ալէ՛քՍ.—Բայց դեռ աւելի սոսկալին պատմեմ ձեզ... (Լուռ. խիստ մռայլ) Դուք անշուշտ դեռ չէք մոռացել Սըրբաշէն գիւղի փորձանքը... Մի գիշերւայ մէջ ամբողջ գիւղը գրեթէ մոխիր դարձաւ հրդեհից... Տաւար, մարդ... Յիշում էք:

Թէ՛րէ՛ք.—Այո... Ինչ էք ուզում ասել: Այդ ժամանակ ես Թիֆլիզ էի, բայց լսեցի. սարսափելի բան էր:

Ալէ՛քՍ.—Այո... Դէպքից շատ ժամանակ չի անցել... Ես Թիֆլիզից նոր էի գալիս և պատահամբ ընկերացայ այնտեղ գնացող մի քանի պարոնների հետ, որոնք Թիֆլիզում կազմած օգնութիւն հասցնող յանձնաժողովից էին ուղարկւել: Դէպքից իսկոյն յետոյ արդէն՝ հաց, հագուստ և ուրիշ օգնութիւններ էին հասցրել թշուառ և բացօդեայ մնացած վիրաւորներին ու անօթիներին...

Թէ՛րէ՛ք.—(Ուղիղ նրա երեսին նայելով) Այո... Հայրս էլ, յիշում եմ, երկու հարիւր ռուբլի նւիրեց...

Ալէ՛քՍ.—(Ստոր) Դուցէ... Այդ պարոնների հետ մենք, մթնանում էք, երբ Սըբաշէն հասանք: Դիւղացիք նստել էին իրենց խճիթների մոխիրների վրայ, փլատակների առաջ... Կանայք

արտասուում էին վիրաւորների և մեռածների վրայ... Ո՛ղբ, արտասուք... Սոսկալի տեսարան էր... Իսկ եթէ տեսնէիք վառածները, եթէ լսէիք նըբանց աղաղակն ու ձիւն... (Քիչ լուռ) Հետս եղած բոխիկը իսկոյն ցած թռաւ իր օգնականի հետ, իսկ ես, յուզւած, մօտեցայ մի պատի տակ կիտւած գիւղացիների և խօսեցի, մխիթարեցի... Ահա, այդտեղ էր, որ մի սոսկալի բան լսեցի... Դուցէ սա ձեզ անհաւատալի թւի, սակայն ստուգեցի—իրողութիւն էր... (Քիչ լուռ) Դիւղացիք պարտք ունէին մի վաշխառուի. վաշխառուն արդէն հրաման ունէր առնելու գիւղացիներից իր պարտքը՝ որն է կերպով... ու եկել խլել էր նրանցից... Թիֆլիզից իբր նպաստ, անօթիներին և մերկերին իբր օգնութիւն ուղարկւած ցորենը, ալիւրը... գրեթէ ամեն ինչը...

Թէ՛րէ՛ք.—(Աստիկ վրդովւած) Դուք... դուք հրէշային բաներ էք պատմում... Եւ այդ վաշխառուն անի է, նոյնը...

Ալէ՛քՍ.—Նա է... Մի ամբողջ գաւառ ճանկերի մէջ առած, չի խնայում նրանց թշուառութիւնն իսկ... Երաշուլութեան, անբերրիութեան տարի է գալիս, պարտք են վերցնում... վաշխառուն է երևան գալիս...

Թէ՛րէ՛ք.—Սարսափելի է... Շատ, շատ ահուելի... (Մի րոպէ լուռ, յետոյ յանկարծ մօտենում է Ալէքսանին) Եւ դուք դըբանց դէմ է որ կուել էք ուզում, դրա համար է որ մտածում էք գիւղումը մնալ... Ասացէք. դուք նրանց կոչնչացնէք, չէ...

Ալէ՛քՍ.—(Լուրջ եւ հաստատուն) Այո, դրա համար է... Ես նրանց կը ջնջեմ աջ ու ահեակ. կը ջնջեմ անխնայ. գիւղում մնալով՝ չեմ թողնիլ ես, որ այսուհետեւ այդպիսի աւազակներ կողոպտեն գիւղացիներին...

Թէ՛րէ՛ք.—(Մի րոպէ հիացած նրան նայելուց յետոյ՝ պարզում է իր ձեռքը) Դուք հերոս էք, ահա թէ ինչ... Ես յիմար էի, որ աշխատում էի հանել ձեր գըլխից՝ գիւղում մնալու միտքը... Հայրս, ձեր օգտի համար, պատւիրել էր ինձ անպատճառ համոզել որ գիւղում չը մնաք... բայց ես ձեզ կատարելապէս հասկանում եմ այժմ... (Ուզում է ձեռքը ետ քաշել):

Ալէ՛քՍ.—(Չի թողնում ձեռքը) Ո՛հ, ո՛հ, թողէք ինձ ձեր ձեռքը... Օ՛հ, որքան, որքան լաւն էք դուք, Թէ՛րէ՛ք. և ես ձեզ որքան սիրում եմ...

Թէ՛րէ՛ք.—(Յուզւած, երերուն) Ե՛ւ ես... ես... Թող ձեռքս, Սաշա, մեր հայրերը գալիս են... Ձեզ ես հասկանում եմ... թողէք...

Դ) ՆՈՅՆՔ, ԳՐԻԳՈՐ ԵՒ ՍԱՀԱԿ

ԳՐԻԳՈՐ.—(Հեռից սկսելով) Բա՛ս... Որ ասում եմ... (Երևում է) Կը խաբեն խեղճ տղին. կը խաբեն... (Ալէքսանին եւ Թէրէքը լսելով, որոնք միմեանցից հեռացել են) Այստեղ էք դուք դեռ:

ՍԱՀԱԿ.—Մարգոն հըր է:

Ալէ՛քՍ.—Ներսուսն է...

ԳՐԻԳՈՐ.—Երեւի ճաշի պատրաստութիւն է տեսնում... (Սահակին) Դէհ, Սահակ բէգ, մէքը էլ ներս գնանք ու մեր էն գործը կարգադրենք... Թող դրանք ըստեղ խօսան, ջահիլ են... Մէկ էլ՝ որ դրանց լեզուն մենք չենք հասկանալ... Գնանք:

ՍԱՀԱԿ.—Համեցէք... (Առաջ է ընկնում եւ տան դուռը բաց անում):

ԳՐԻԳՈՐ.—(Քայլելով այն կողմը եւ աստիճանների վրայից) Երբ գնալու լինես, Թէ՛րէ՛ք, ինձ իմաց տուր:

Թէրէջ.—Լաւ, հայրիկ. մենք այս ըրողէիս ներս կը գանք...

Գրիգոր.—(Կանգ առնելով) Ես խօսած եմ... Ինչքան քէֆներդ կուզի—չանա խփէք... Ձերը խօսէր է—խօսա, հա խօսա... Էս թատրոն է, էս բալ է... Ես ի՞նչ գիտեմ... (Ծիծաղում է) Դրուստ չէմ ասում, Ալէքսան բէգ... (Սահակին) Դէհ, գնանք, Սահակ բէգ... (Ժպտում է եւ Սահակի ետեւից ներս մտնում):

8) Թէրէջ Ա. ԵՒ ԱԼԷՔՍԱՆԴԵՐ

Ալէքս.—(Սպասում է որ դուռը փակւի, յետոյ վազում է դէպի Թէրէջը եւ ձեռքերը բռնում) Խօսի՛ր, Թէրէջ... Ասա, մի՞թէ դու ինձ չես սիրում, մի՞թէ ես սխալւել եմ:

Թէրէջ.—(Քնքուղութեամբ կայծում է նրան) Կամայ խօսիր, Սաշա... Դու լաւ տեսնում ես...

Ալէքս.—(Գրկում է եւ դուռը) Ի՞նչ հրեշտակ... (Յանկարծ թողնում է նրան դրկից եւ դէմքը կնճռած՝ քիչ հեռանում) Բայց, սպասեցէք... Ես դեռ ամեն ինչ չեմ ասել... Եւ դա՛ իմ կողմից վատ բան է...

Թէրէջ.—(Չարմացած եւ վախեցած) Ի՞նչ եղաւ քեզ... Ա՛հ, գուցէ դու ուրիշի...

Ալէքս.—(Արագ միջահատում է) Ո՛հ, ո՛հ, այդ չէ... (Քիչ լուռ) Լսեցէք, օրիորդ... Դուք իմացա՞ր իմ վճիռը... Ես պիտի մնամ գիւղում, լինեմ գիւղացիների պաշտպան, վարեմ նրանց արգար դատը... Ինձ հետ էք գուր:

Թէրէջ.—Միայն այդ... (Ապահոված եւ ժպտուն՝ մօտենում է) Ես ինքս ուրախութեամբ կօգնեմ քեզ այդ աւազակներին կախելու... Եւ ամենից

առաջ՝ այդ խեղճ ծերունու դահճին... Դու կարող ես, չէ՞, կարող ես...

Ալէքս.—Յոյս ունիմ... (Աւելի լուրջ) Մի խօսք ես... (Գժարութեամբ) Ի՞նչ կասէիր, օրինակ, եթէ այդ վաշխառուն... հայրս լինէր...

Թէրէջ.—(Սարսափած ետ է քաշւում) հայրդ... Դու կատակում ես, Սաշա... Սահակ աղան, այդ բարի ծերունի՞ն...

Ալէքս.—Այո... Օրինակ հէնց... Հայրս: Մարդու արտաքինը խաբուսիկ է: Դուցէ հայրս մի կեղծաւոր է, մի աւազակ, որ գիտէ մեզ նմանների մօտ իրեն բարի ձեւացնել...

Թէրէջ.—(Միջահատելով) Բայց լսի՛ր, ի սէր Աստծոյ, այդ ինչերն ես ասում... Դու հայհոյում ես, այդպէս բան չէ կարող լինել, ո՛հ...

Ալէքս.—Իսկ եթէ այդպէս է, եթէ փաստեր կան... (Փորձի) Եթէ նոյն իսկ գիւղացիները պնդեն ու հաստատեն... Եւ եթէ դու լինէիր աղնիւ մարդ, սիրէիր ինձ, նոյն իսկ շատ սիրէիր—ի՞նչ կանէիր. կը խնայէիր հօրս, չէիր ջարդիլ նրան, չէիր ազատիլ գիւղացիներին նրա ճիրաններից... (Մօտենում է հետզհետէ) Խօսի՛ր, Թէրէջ. քո խօսքերից, ասելիքիցդ է կախած իմ երջանկութիւնը...

Թէրէջ.—(Լուռ, դժոյն՝ նստում է շատ մեղմ) Չը գիտեմ... Անհաւատալի բաներ էք ասում... Չէ կարող լինել... Սխալւում էք անշուշտ...

Ալէքս.—Իսկ եթէ չեմ սխալւում, եթէ զօրեղ փաստեր ունիմ...

Թէրէջ.—Դուք ինձ տանջում էք... Փորձում էք դուք ինձ... (Քիչ լուռ) Թիւնից յետոյ՝ յանկարծ ոտքի է կիւնում, խիստ զննող՝ նայում է Ալէքսանին, ապա՝ շեշտելով եւ ծանր) Ի՞նչ էք ուզում ա-

սել... (Դողողոյն) Պարզ, ուղղակի խօսեցէք... Ձեր հայրը չէ այդ վաշխառուն... Դուք այդ չէիք ասելու...

Ալէքս.—Թէրէջ, դուք ինձ չէք պատասխանում:

Թէրէջ.—Պատասխան... Ահա... Եթէ ճշմարիտ են ձեր ասածները... աւազակը՝ աւազակ է, թէկուզ...

Ալէքս.—Թէկուզ նա ձեր հայրն իսկ լինէր...

Թէրէջ.—(Յնդում է եւ զոնաւոր կրծքով ծաղիկ) Ա՛հ... զգում էի, զգում էի... (Գլուխը ձեռքերի մէջ է առնում, յանկարծ հեկեկում է եւ ընկնում նստարանի վրայ):

9) ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

ՄԱՐԳ.—(Ներս է վազում) Թէրէջ, հայրդ գնում է... (Տեսնելով Թէրէջայի դրոժիւնը սառած մնում է) Վա՛յ... Թէրէջ... (Վազում է դէպի նա):

Թէրէջ.—(Թուլ՝ ելնում է) Ոչինչ չը կայ... Այնպէս... Գնանք... (Ալէքսանին) Կատարեցէք այնպէս, ինչպէս զգում էք... Սակայն, հասկանում էք. նա իմ հայրն է... և այդպիսի դէպքում... մեր մէջ չէ կարող լինել ոչինչ... (Գնում է դէպի տան դուռը. այնտեղ մի վայրկեան շուարած կանգնում, յետոյ մէկէն գլուխը դնւ է տալիս դռան) Աստուած իմ, Աստուած իմ...

Ալէքս.—(Վազում է դէպի նա) Թէրէջ, ներքի ինձ...

Թէրէջ.—(Հեռացնում է նրան) Ոչ... Վաղ թէ ուշ՝ պիտի իմանայի... Օ՛, ես այժմ սկսում եմ շատ բան հասկանալ... Հօրս ստիպումները... Ամեն, ամեն ինչ... Բայց սիրեցի... Որքան, որքան ամօթալի բան... Ո՛հ, հեռու

կացէք... (Ետ է քաշւում) Թողէք ինձ, մոռացէք ե... և եթէ կարող էք՝ ներեցէք ինձ...

Ալէքս.—Թէրէջ, մի ըրա՛յ, մի բան մտածենք...

Թէրէջ.—Ոչինչ... Դուք ասացիք որ փաստեր ունիք, գիւղացիք բոլորը... Իսկ դուք, դուք ինչ ունիք նրա դէմ. չէ՞ որ նա ձեզ սիրում է...

Ալէքս.—Նա մեր պարտատէրն էլ է, իմ խեղճ Թէրէջ... և մեր այս տունը, այգին... Բոլորը գրաւ է հօրդ մօտ...

ՄԱՐԳ.—Սաշա...

Թէրէջ.—(Աւելի զոնաւոր) Այդպէս... Եւ դուք, և ձեր հայրը... Այժմ աւելի հասկանում եմ հօրս վարմունքը... Աստուած իմ, որպիսի ստորութիւն...

10) ՆՈՅՆՔ, ԳՐԻԳՈՐ ԵՒ ՍԱՀԱԿ

(Դուռը բացւում է եւ դռան վրայ երեւում են՝ Նախ Գրիգորը, ետեւից՝ Սահակը):

Թէրէջ.—(Որ տեսնում է հօրը, ուղղում է եւ երերուն) Հայր... Սաշան իմ ձեռքն է խնդրում քեզից...

ԳՐԻԳՈՐ.—(Աւրախ) Իրաւ... Վա՛հ, այդպէս յանկարծ...

Թէրէջ.—... Եւ ես մերժեցի...

ԳՐԻԳՈՐ.—(Դէմքը կնճռելով) Մերժեցիր... Բայց ինչո՞ւ... Չէ՞ որ դու ինքըդ ասացիր, թէ սիրում ես նրան և թէ իմ ցանկութիւնը կը կատարես...

Թէրէջ.—(Բարկութեամբ) Ծածկիր, ծածկիր այդ բոլոր կեղտը... Մերժեցի, որովհետեւ չեմ ուզում քեզ ազատելու գործիքը դառնալ. իբր վարձքեղ փրկելու... Ես սիրում եմ Սաշային. բայց եթէ մեռնէի իսկ սիրուց, և եթէ իմանայի թէ դու ի՞նչ բանի գործիք ես դարձրել ինձ... (Հեկեկալով)

ընկնում է Մարգարիտի դիրկը, որ նրան ներս է տանում):

(Մի րոպե ամենքը լուռ՝ նայում են միմեանց):

ԳՐԻԳՈՐ.—(Բարկունեամբ) Այդպէս ուրեմն, պարոն. դու վճռել ես ինձ հետ կռիւ՞ բռնուել... Փորձիր... (Զարամիտ ծիծաղով՝ հանում է ծոցից մի մուրհակ) Տես... Ո՛չ ուշ քան մի ամիս—և այս տունը իմն է... (Ծիծաղ) Զը գիտէիր այս, հա...:

ԱԼԷՔՍ.—Գիտէի: Գիտէի նաև, որ դուք մի գծուծ վաշխառու էք և ամբողջ գաւառի հարստահարողը... Արէք. վահն իսկ արէք...:

ՍԱՀԱԿ.—Ալէքսան... Սաշա... Իսէր Աստծոյ... (Գրիգորին) Գրիգոր աղա...

ԳՐԻԳՈՐ.—(Կատաղի) Է՛լ սուս, էլ հերիք է... Այս լածիւրակը շատ է առաջ գնում... Պրիսեաժնի՛յ, ինձ դէժ կռուել... Տեսնե՛ք, ի՛նչ կանես հօրդ ու մօրդ, ի՛նչ կուտեցնես... Գիւղը մնա, գիւղացիներին պաշտպանիր... Պրիսեաժնի՛յ...

ԱԼԷՔՍ.—(Բարկունեամբ) Դուք անմիջական հրաման ունի՞ք արդէն՝ այս տանը տէրը դառնալու...

ԳՐԻԳՈՐ.—(Աւելի կատաղած) Անմիջական հրաման... Տօ ո՞ւմ հետն ես խօսում, դժամբ է քեզ դուրս քցել տալ. օրէ՛նք չը գիտես, ի՛նչ է...:

ԱԼԷՔՍ.—Լաւ ուրեմն, քանի այդ

հրամանը չունիք—այս տան տէրը դեռ ես եմ... (Այգու դուռն է ցոյց տալիս) Համեցէք...

ԳՐԻԳՈՐ.—(Կատաղի) Այդպէս, ինձ դուրս էլ ես անում... Լաւ, ես քեզ ցոյց կը տամ, թէ ո՞վ է Գրիգոր աղան, որ հաղար քեզ պէս փաստաբանների է մատների վրայ խաղացրել... (Քայլում է դէպի այգու դուռը եւ այնտեղից՝ Սահակին) Մինչև մէկ ամիս կամ 5000 ըուբլին իր տոկոսներով և կամ՝ կը տեսնենք...

ԱԼԷՔՍ.—Իսկ առ այժմ—համեցէք... (Քայլում է դէպի նա) Ափսոս որ Թէրէզան ձեր աղջիկն է...

ԳՐԻԳՈՐ.—Բայց ո՛չ քեզ նման լածիւրակի պատառը... (Քրքիջ) Հա՛-հա՛-հա՛... Բաս ուզում էիր կո՛ւլ տալ, էլի՛, աղջկան՝ հօրդ պարտքն էլ վրան... Ձէ, բարեկամ, Գրիգոր աղան այդքան էլ էշ չէ... Լածիւրակ... (Սպառնալից՝ դուրս է գնում)

11) ԱԼԷՔՍԱՆԴՐ ԵՒ ՍԱՀԱԿ

ՍԱՀԱԿ.—(Քիչ լուռիւնից յետոյ՝ յուսահատ) Սաշա, մեր տունը քանդեցիր...:

ԱԼԷՔՍ.—(Խիստ) Նա այլևս մերը չէ, հայր ..

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԵՐՐՈՐԴ ԵՐԱՐԻԱԾ

Գրիգոր աղա վարակեանի տանը մի հիւրասենեակ՝ հարուստ եւ ճոխ կահ-ատրուքեամբ: Փոքրիկ գրադարան, երկար վարագոյրներ լուսամուտներին: Առաստեան ժամը 10-ի մօտերն է. քաց լուսամուտից արեւի ճառագայթները ներս են ընկել: Աջ կողմից մի դուռ՝ տանում է դէպի Թէրէզայի ննջարանը: Խորքում՝ մուտքն է: Թէրէզան մի օրօրող աթոռի մէջ նստած՝ գիրք է կարդում: Բեմի վրայ՝ մի քանի ըոպէ լուռիւն է: Դրսից լսում են խառնի խառն ձայներ:

1) Թէրէզա, Տիգրէ վԱՐԱԿԵԱՆ (մայրը)

Տիգ. վԱՐԱԿԵԱՆ. (Տնային հագուստով եւ փոշոտ՝ մտնում է. ձեռքերն իրար քսելով թափ է տալիս ալիւրոտ ձեռքը) Վերջացաւ... (աղջկան) Բաս մե՛նակ ես կարդում, աղջիկ... (Նստում է մի բաղկաթոռի մէջ) Շատ ես անցկացել:

Թէրէզ.—(Տխուր եւ մոռլ) Ձէի կարդում... Դեռ չը վերջացրի՛ն:

Տիգ. վԱՐԱԿ. Ի՞նչը. ցորեն դատարկե՛լը... Ձէ, միշտ բերում են... բայց, դէ՛հ. տեղը արել եմ. ծառաները կը հակեն:

Թէրէզ. (քիչ լուռ) Ասա, մարիկ. հայրըս գնե՛լ է այդքան ցորենը: Ի՞նչ պէտք է մեզ այդքանը:

Տիգ. վԱՐԱԿ. Ի՛հ, աղջիկ... Դէ ես ի՛նչ գիտեմ: Հալքաթ ծախելու համար է:

Թէրէզ. Գուցէ իր պարտքով տւած փողերի տոկոսներն են, չէ՞:

Տիգ. վԱՐԱԿ. Ի՞նչ մեր բանն է այդ. ինչ ուզում է լինի... Հօրդ գործերի մէջ ես ոչ խառնուել եմ, ոչ էլ ուզում եմ խառնուել... Դէ՛հ, կարդա տեսնե՛ք... Որտե՞ղ մնացինք:

Թէրէզ. (զրքի վրայ է նայում եւ մտազբաղ) «Տղան հասնում է վիշապի տան առաջ»... (յանկարծ մօրը) Ասա խնդրեմ, մայրիկ. իւր, մածուն, ձու... այդ բոլորը որ այնքան բերում են մեզ—դըրմնք էլ տոկոսներ են:

Տիգ. վԱՐԱԿ.—Զանկես տարար... Մեզ ինչ. կուզեն՝ թող տոկոսներ լինին... Հալքաթ, փող որ պարտք է տւել—խօ ձրի չի՛ տւել... Առատուրը այդպէս է լինում... Կարգա. հետաքրքիր է թէ վիշապը ի՛նչպէս ընդունեց աղային:

Թէրէջ.—Ի՞նչպէս պիտի ընդունէր... Անշուշտ կտոր-կտոր արած կը լինի:

Տիկ. ՎԱՐԱԿ. (Ժպտուն) Հէնց էդ աս, էէ... Հեքեաթների մէջ միշտ ամենապատիկ տղան՝ սպանում է վիշապին: Ես շատ եմ սիրում այդպէս հեքեաթները:

Թէրէջ.—Սա հեքեաթ չէ. այլաբանական զրոյց է:

Տիկ. ՎԱՐԱԿ. Կուզի՞ թող եալի-բան էլ լինի մէջը. սիրում եմ... Դէհ, կարդա...

Թէրէջ.—(Քիչ լուռ եւ մտախոհ մնալուց յետոյ՝ կարդում է)... «Եւ երբորդ որդին, կտրիճ Միլլէթը, եկաւ կանգնեց երկաթէ դռան մօտ, վիշապի պալատի առաջ»... (ընդհատում է, մէկէն դառնում է մօրը) Կուզէի իմանալ, Սըր-բաշէնցիք էլ կան զբանց մէջ:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Բա Սըբաշէնցիք ինչ գործ ունին ըսեղ:

Թէրէջ.—Չէ... Յորեն բերողներ...

2) ՆՈՅՆՔ ԵՒ ՍԵՐԳՕ (Ժառանգ).

—ՍԵՐԳՕ.—(փոշոտ՝ երեսում է դրան մէջ) Խնամում...

Տիկ. ՎԱՐԱԿ.—Ի՞նչ կայ... Թողոտ հէր ես զալը մտնում:

ՍԵՐԳՕ.—Բա աղէն հրտեղ աս. գեղացիք սպասում են ախր:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Էլ ի՞նչի են սպասում. թող գնան էլի...

ՍԵՐԳՕ.—Չեն գնում. ասում են՝ աղի հետ գործ ունենք:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Ի՞նչ օթախում չի:

ՍԵՐԳՕ.—Չէ. մտիկ տւի... Խաշա-տունն աս ընտեղ:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Դէ ուր որ ա՛ կը գայ... Թող սպասեն... Անց կենալիս

Հերիքնաղին ասա մաի բեափը քաշի՛ էս ա գնալիս եմ... (Մտան գնում է):

Թէրէջ.—Ինչո՞ւ են սպասում գի-ղացիք, մայրիկ:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Ի՛նչ, աղչի... մէկ հալալ չեն թողնում հեքեաթը լսեմ... Դէ ես ի՞նչ գիտեմ. հալալ զործ ունին:

Թէրէջ.—Այո... Երևի վէքսիւները նորոգելու... (Ենթում է եւ գնում դէպի լուսամուտը. այնտեղից) Մայրիկ, Բաղդասար ամին շատ խեղճ է:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Ասում են՝ շատ խեղճ է... ինչո՞ւ ես հարցնում... վեց-եօթ ջան ընտանիք ունի:

Թէրէջ.—Եւ շատ էլ պարտք... բաս հրտեղից է այդքան ընծայ բերում մեզ... (Քիչ լուռ) Տոկոսների տեղ է... Դու չը գիտես, մայրիկ, թէ նա որքան է պարտ հօրս:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Հօրդ... (զարմացած) բա նա ի՞նչի պիտի հօրդ պարտք ունենայ:

Թէրէջ.—Ո՛ւնի... 100 ռուբլի է պարտքը, բայց 200 պիտի տայ... Հա-րիւրը՝ մի տարւայ տոկոս... Մէկին-մէկ... Մածուելը, գառը—դրանք էլ ա-ւելի...

Տիկ. ՎԱՐԱԿ.—(Շփոթւած) Ես էդ չէի իմանում... (Ակամայ նեղացած) Դէ տեղն ա նրան. ի՞նչի ա պարտք ա-նում. թող եօրդանի գեօրա ոտները պարզի... (Ենթում է եւ քայլում դէպի դուռ):

Թէրէջ.—Չը լսեցինք թէ վիշապը ինչպէս ընդունեց տղային:

Տիկ. ՎԱՐԱԿ.—Դէ կամրում ես՞որ... Գնամ տեսնամ կուխնումը ի՞նչ են ա-նում. Մատվէյ եգօրիչը էսօր ճաշին մեզ մօտ է գալու:

Թէրէջ.—Դատաւորը... Իսկ հայրս երբ կերթայ նրա մօտ:

Տիկ. ՎԱՐԱԿ.—(Չարմացած՝ կանգ է առնում) Ընչի՞ որ... Երբ կանչի:

Թէրէջ.—Երևի շուտով... (Մտախոհ նայում է դուռն լուսամուտից):

Տիկ. ՎԱՐԱԿ.—(Քիչ նայում է նրան, յետոյ գլուխն է շարժում եւ դուռն գնում)

Գրտում խառն աղմուկը մեծանում է. լրս-ւում է Գրիգոր աղայի բարձր ձայնը: Յետոյ աղմուկը յանկարծ դադարում է եւ Գրիգոր աղան է խօսողը դոսից:

ԳՐԻԳՈՐ.—(Գրսից)... Լաւ, կը տես-նենք... Մի քիչ սպասէք...

Թէրէջ.—(Յնչուում է, դառնում եւ գը-նում է ննջարանը):

3) ԳՐԻԳՈՐ, ՔԱՉԱԼ ՄԱՐՏԻՐՈՍ

ԳՐԻԳՈՐ.—(Մտնում է խորի դռնից, նայում է շուրջը) Էս հէր են մերոնք... (Գնում է դէպի ննջարանի դուռը եւ քիչ բաց է անում) Դու այստեղ ես, Թէրէջ... Հա, կարդում ես: Լաւ, քեզ անհանգիստ չենք անիլ: (Փակում է դուռը եւ Մարտիրոսին) Դէհ, տեսնե՞նք... Նստի՛ր... Ասածներս արի՛ր:

ՄԱՐՏԻՐՈՍ.—Բա չէ՞ի անիլ: Կան-չեցի ամենքին: Կը գան: Էնպէս ու-րախ էին որ...

ԳՐԻԳՈՐ.—(Չար ժպիտով) Յիմար լի-նելուցն է... Նստի՛ր: Ապա, ցոյց տուր վէքսիւները... Շատ է:

ՄԱՐՏԻՐՈՍ.—Հինգ հարուր մանէ-թի... Հէնց որ փողերը տաս՝ ձեռք կը քաշեն:

ԳՐԻԳՈՐ.—Իսկ գրածն ինչքան է:

ՄԱՐՏԻՐՈՍ.—Ճիշտ 703 մանէթ... Բոլորը մէկ տարով կամ վեց ամսով... (Հանում է ծոցից մի կապոց եւ վերցնում է մէկ մէկ մուրհակները) Ա՛յ, էս մէկը Կար-միր-քարեցի Սարուխանին: 150 կը տանք՝ մէկ տարով... Տոկոսն էլ վրան խփած—217 մանէթի:

ԳՐԻԳՈՐ.—Էլ ինչի՞ եօթը... (Ժըպ-

տիով) Ամա հասկանում եմ... Սատա-նան ես եղել, հա...

ՄԱՐՏԻՐՈՍ.—Բո՛ղ դուլուղումը՝ հի ըլիլ... Ըսենց պակաս թւերն են լաւ: (Շարունակում է) Էս մէկը քիչ գե-ոքն էր: Մեր գեղացի ա: Շատ գրել չէլաւ. կարդալ էր ուզում տայ... 200 ուղեց, ու մէկ սահաթ չանա խփելուց յետոյ՝ հագիւ թողաց որ 250 գրեմ:

ԳՐԻԳՈՐ.—(Բարկացած) 25 տոկոս... Ինչի՞, փողը չհղումն եմ գտել թէ՛ նրա հօրն եմ պարտական... Էդ հօր շան որ-դին էր:

ՄԱՐՏԻՐՈՍ.—Սարիկէնց Սմբատը: **ԳՐԻԳՈՐ.**—(Ոստնում է տեղիցը) Ինչ ես ասեմ... (Ուրախ) Գրաւ-բան. խօ գրել ես:

ՄԱՐՏԻՐՈՍ.—(Ժպտուն) Չէ, էլ ի՞նչ գրաւ... Վեց ամսով...

ԳՐԻԳՈՐ.—(Ընդհատում է զայրացած) Աղա քեանչալ, քեզ չեմ ասել որ մեր գեղացոց հետ գործ բռնելիս՝ առաջ ինձ հետ խօսիս... Է՛ն ես եղել, էջը... Բա նու չեմ իմանում որ նրանց տու-նը մեր տանը կպած ա...

ՄԱՐՏԻՐՈՍ.—Գիտեմ, հնց չիմա-նամ... Ամա դէ որ չեղան...

ԳՐԻԳՈՐ.—Պատուի դէն քցի: Չեմ տալիս. ո՛չ մի կոպէկ... Թէ իր տունը գրաւ կը դնի՛ր...

ՄԱՐՏԻՐՈՍ.—(Խորամանկ) Բա որ գրաւ դնի—ինձ ի՞նչ խէր կայ դրանից:

ԳՐԻԳՈՐ.—Հայ շուռն ես հա... Դէ, քեզ ես պակաս եմ գոհացրել... Յիսուս մանէթ կը տամ, թէ Սարիկէնց Սմբա-տը մէկ ճանկա ընկնի:

ՄԱՐՏ.—(Ոտքի է կնիւմ) Բաս տուր... (Մի ձեռքով մուրհակն է ցոյց տալիս եւ միւս ձեռքը պարզում) Հրէս ա՛յ. ձեռք քաշած, տունն էլ գրաւ դրած. փողն էլ ես տւի, որ դու ինձ տաս...

ԳՐԻԳՈՐ.—(Ուրախ) Հարամդատէն ես

եղել, հա... Ամա հալալ ըլի քեզ—տամ... (Հանում է եւ տալիս) Տոր վէքսիլը... Տես թէ եկող տարի հնոց եմ մեր բաղը լէ-նացնում էդ կողմից...

4) ՆՈՅՆՔ, ՍԵՐԳՕ, ԹԵՐԷԶԱ.

ՍԵՐԳՕ.—(Երեւում է դռան մէջ) Աղա, գեղացիք...

ԳՐԻԳՈՐ.—(Յախուռն) Ի՞նչ... Թող սպասեն:

ՄԱՐՏԻՐՈՍ.—Աղա, լաւ չի, մի ըս-պասացնել. Կէսօր կը դառնայ. մար-դիկ խեղճ են, գործեր ունին:

ԳՐԻԳՈՐ.—Բաս լաւ. գնա օթախ տար՝ գալիս եմ:

ՍԵՐԳՕ.—Ընտեղ ախր Խաչատուրն ա Խաչարեցոց հետ հաշիւ տեսնում:

ԳՐԻԳՈՐ.—Ըտէնց... (Քիչ լուռ) Բաս կաց... (Գնում է դէպի Թէրէզի ննջարանը. դուռը քիչ բաց է անում եւ աղջկան) Թէ-րէզ... (Քիչ լուռ) Որ դուրս գնաս՝ պար-տէզում կարդաս, լաւ չի՛ լինիլ... Հի-մի այստեղ գիւղացիներ կը լցնին. նը-րանց գողգողոցը քեզ կը խանգարի:

ԹԵՐԷԶ.—(Ներսից) Լաւ... Գնամ...

ԳՐԻԳՈՐ.—(Աչքով է անում ծառային եւ ինքը սպասում):

ԹԵՐԷԶ.—(Քիչ յետոյ դուրս է գալիս եւ անցնում. չի պատասխանում Վարտիրոսի խո-նարհ բարեկին: Միւս դռան մօտ համեմիս՝ դառնում է հօրը) Հայր, այդ եկող դիւ-ղացիների մէջ Սրբաշէնցիք էլ կան...

ԳՐԻԳՈՐ.—(Ձաքմացած) Ի՞նչ... Սըր-բաշէնցիք... Ձէ. Ինչի՞ որ...

ԹԵՐԷԶ.—Ոչինչ... (Գնում է):

ԳՐԻԳՈՐ.—(Նրա գնալուց յետոյ կնճրո-ւած եւ մտախոհ, դառնում է Վարտիրոսին) Գու բան հասկացար...

ՄԱՐՏԻՐՈՍ.—(Ուսերն է թոթւում) Բա-րիշէն հիւանդ ա երեւում...

ԳՐԻԳՈՐ.—(Ծառային) Ասա թող գան հիմի... Խանութին էլ ասա՝ թող մէկ գնա Թէրէզի մօտ... (Խիստ) Շան օրը կը քցեմ ձեզ, թէ բարիշէնի քէֆին կը-պել էք... Գնա... (Ծառայի գնալուց յե-տոյ) Հիւանդ ա երեւում... (Կնճոտ եւ կատարի) Էն-էն-էն... արեւկանտին... (Սթափւում է եւ Վարտիրոսին) Պրծի՛ր. էլի կայ:

ՄԱՐՏԻՐՈՍ —(Խոնարհ) Մէկը ֆնաց... Շան չի. 150—Մէկ տարով տւած՝ 236 մանէթ... Սիպտակ-չէնից:

ԳՐԻԳՈՐ.—Լաւ, թող ձեռք քաշեն, երեկոյեան բեր ու փողերն ստացիր... Դէհ, հիմի դու գնա: Բաղդասար ամին —բանը թէ գան՝ խօսիր հետները, մին-չեւ ես ըստեղ պրծնեմ:

ՄԱՐՏԻՐՈՍ.—(Գնում է դէպի գուռը):

ԳՐԻԳՈՐ.—Ամա բաղչէն չը մտնէք... Դալմադալ էլ չը հանէք:

ՄԱՐՏԻՐՈՍ.—Ձէ. քուչումը կսպա-սդնք, մինչեւ միւսները գնան: (Գնում է):

5) ԳՐԻԳՈՐ, ՄԱՐԿՈՍ, ԳԱԼՈՒՍ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏ (գիւղացիներ).

ԳՐԻԳՈՐ.—(Մենակ. դէմքը կնճած եւ մռայլ) Ամեն բան ասած կը լինի... Սըր-բաշէն... Հը՛մ... Ձը լինի՞ դա էլ է պատմել... (Ապառնալից) Սպասի՛ր, ես քեզ էնպէս թոցնեմ որ...

ԳՐԻԳՈՐ.—(Երեւում են դռան մէջ, ներս են գալիս եւ դռան կողքին խոնարհ կանգնում):

ԳՐԻԳՈՐ.—(Նրանց) Ներս եկէք... Հը՛ր, ուզում էք թաղացնի՞... (Նեղացած) Ձէ, էլ չեմ կարող... Փողերս բերէք ու պրծնի-գնա... Գործերս հաւաքում եմ-գնում ըստեղից. յաւիտեան գնում... Է՛ն ա, ձեզ նոր ատակատ ա եկել. նրան գնացէք, թող նա պարտք տայ

ձեզ... Գանի նա կայ—էլ ես ի՞նչացու եմ... Ես ձեզ կողոպտում եմ—զրկում. ես փիս մարդ եմ... Հը՛ն, լաւ մարդը եկել ա. առանց տոկոսի թող տայ... Ձէ, էլ չի կարելի, փողերս տւէք... Գործերս հաւաքում եմ:

ԳԱԼՈՒՍ.—Դէ էլ ի՞նչու ես նեղա-նում, աղա. մենք սկի երբ ենք տեսել նրա երեսը... Կամ նա ի՞նչ փող ունի, որ մեզ պարտք տայ... Մենք քեզ չենք թողալ. դու մեզ միշտ լաւութիւն ես արել... Էս անգամ էլ արա, քեզ դուր-բան... Չունենք, բան չը ֆնաց. քեա-սաղ տարի էր... Չմեռա կը կոտոր-ւենք՝ թէ եղածն էլ ծախենք ու պարտք-ներս տանք:

ԳՐԻԳՈՐ.—Դէ բա ես ֆնոց անեմ. խօ պարտաւոր չեմ ձեզ... Թէ լաւու-թիւն էր—էս էլ հէրիք էր: Հայ-քրիս-տոնի պէս՝ էս երկու տարի, փողս ձեզ մօտ՝ արնթօտ չի անում... Սօ ես խաղ-նատար չեմ, ես միլիօնատէր... Չեմ կարայ, չէ. փողս պիտի տաք... (Խիստ՝ նստում է):

ՀԱՅՐԱՊԵՏ.—Մեզ վրայ իզուր ես նեղանում, աղա... Չունենք, ճրտեղից տանք. խօ վերջին ունեցածներս էլ չեմ ծախելու: Մի քիչ մանջալ տուր, տոկոսը վրան եկ՝ մինչեւ եկող ամառ...

ԳՐԻԳՈՐ.—(Բարկունեամբ) Փիէ՛, էդ ի՞նչ տեսակ ես խօսում, տօ. կասես ես ըլեմ քեզ պարտական... Բա դու խիղճ չունես... Ես ի՞նչ ասեմ՝ որ ունեցածս էլ ձեզ մօտ քնացնեմ... Հալա գնացել էք էն... Էս լածիրակին էլ գանգատել՝ թէ ես ձեզ կողոպտում եմ, զրկում եմ...

ԳԱԼՈՒՍ.—Բո՛ւյ, մեղա՛յ Աստուծա՛... Ո՞վ ա ըտէնց բան արել... Ա՛ստուծ, երկինք... Ընչի՞, բա մենք երախտիք չե՞նք իմանում...

ՄԱՐԿՈՍ.—Ա՛յ Գրիգոր աղա, եանի որ ուշը չը դարձնես էդ երեխին—չի՛ ը-

լիլ... Թող իրա համար հա՛ խօսայ, ա-սի. քեզ ի՞նչ կարայանի որ...

ԳՐԻԳՈՐ.—(Ոտքի է ելնում, հպարտ) Բօ, ի հա՛րկ է... Նա հիւ՛ շունն ա որ... Ամա ես ձեզ համար եմ ասում. ձեզ եմ խղճում... Որ ըտենց մարդկանց ձեր մէջը թողաք է՛ք—էլ ինձ պէս մար-դիկ ձեզ չեն օգնիլ... Ընչի՞, գժե՛կ են՝ որ հա՛մ օգնեն, հա՛մ էլ խօսք լսեն...

ԳԱԼՈՒՍ.—Դէ ի՞նչ անենք, ա քեզ մատաղ. դուրս խօ չե՞նք անելու գե-ղիցը:

ԳՐԻԳՈՐ.—Դուրս կանենք, բա՛ս... Ընչի՞. որ հասարակութիւնը կամենայ, չի՛ կարող թուղթ շինի, նաչալնիկին, գուրբերնատօրին... Թէ էս մարդը մեր հասարակութեան մէջ չենք ուզում... Հը՛, Մարկոս, սա լաւ չի՛...

ՄԱՐԿՈՍ.—Բա ի՞նչ ասենք: Ախր մի պատճառ պիտի ըլի, թէ՛ չէ... Էն մարդը ճիշտ ա ֆնաս տւել... Ես թէ չէ...

ՀԱՅՐԱՊԵՏ.—(Ընդհատում է) Մեր քէօխման էլ, ասում են, հետը բարե-կամ ա, միշտ ընտեղ ա, միասին են:

ԳՐԻԳՈՐ.—(Վարկոսին) Պատճառ՝ ա-սում ես... Տօ սրանից լաւ պատճառ—որ պատակաւ մարդկանց անհոնն ա կոտորում, զրպարտում ա... Ես թէ չէ՛ խռովութիւն ա քցում գեղումը...

ԳԱԼՈՒՍ.—Ո՞նց կըլի, աղա: Բա ը՛նչի, քննութիւն չեն անի. հէնց ըն-էնց, մեր ասածին կը լսեն: Չե՛ն ասի թէ՛ սուղումը գանգատ տւէք ու քըն-նենք... Ես թէ չէ՛ որ թուղթ էլ հէնց շինենք—ողջ հասարակութիւնը ձեռք կը քաշի. քեօխման կը թողայ. չե՛ն հարցնիլ թէ մարդը ի՞նչ ա արել, որ ուզում ենք գեղեցը դուրս քշի...

ՄԱՐԿՈՍ.—Ձէ, աղա, էտ ըլիլու բան չի... չենք կարայ. բան չի՛ դուրս գայ:

ԳՐԻԳՈՐ.—(Քիչ նրանց է զննում, յետոյ յանկարծ ժպտում է եւ աւելի կակուղ) Ա՛յ թէ միամիտ խալիս էք ըլել, հա... Հաւատացիք, էլի, որ իմ շատ վէջն ան, թէ նա գեղունի ան, եւ չէ... (Խորիտ) Տօ, ըստի մտիկ տւէք մէկ է... (Գրկ-խարկը վեր է քաշում եւ ձեռքը ծակատին խփում) Ա՛յ, ճակատս բաց ան, ոչ ոքից վախ չունեմ: Ո՛չ գողութիւն եմ անում, ոչ աւազակութիւն... Ընչից պիտի վախենամ... Հանաք արի, հանաք... Ա՛մա միամիտ խալիս էք... (ընտալըստիկ քրքիչ, յետոյ լրջանում է) Հա, դէ քանա չունի. էն որ էդքան խնդրում էք, էլի ձեզ լաւութիւն կանեմ հայ-քրիստոնեայ ենք քանի ձեռքներիցս լաւութիւն գայ՝ պիտի անենք... Գնացէք քեզալին թաղա վէքսիւններ գրել տւէք... Աչքիս վրայ թող փողերս մէկ տարի էլ ձեր մօտը պառկի. կորած տեղ չի:

ԳԱՆՈՒՍՏ.—Աստուած քեզ անպակաս անի: Աստծով... եկող տարի...

ԳՐԻԳՈՐ.—Աստծով, Աստծով... Քեզալը ցածուն ան. վէքսիւններ էլ կայ մօտը... (Գալուստին) Քոնը ի՞նչ քան ան, Գալուստ... Հա 125 մանէթ ան, չէ... Գրել կը տաս 200... Դու էս տարի, գիտես, բոլորովին մոռացել ես մեզ: Ոչ բնորոշ ես մեզ պտուղ, ես գինի... ոչ Ջատկին մի գառը... Բա մեր փողը հէնց ընէնց, մոռացաւ պառկի մօտը... 200 գրել կը տաս:

ԳԱՆՈՒՍՏ.—Վա՛յ, աղա, էդ ի՞նչ կրակի մէջ ես քցում ինձ... Բա ես կմրամ էդքան տոկոս տալ... Բա ինձ ընտանիք չունեմ... Մարկոսից էլ աւելի տոկոս:

ԳՐԻԳՈՐ.—(Բարկութեամբ) էդ դու օրտեղից իմացար թէ Մարկոսից պակաս տոկոս եմ առնելու... Համ էլ՝ Մարկոսը մարդ ան, գիտ ինչ ես: Նոր տարուն, Ծնունդին՝ էլ խոզի ճուղը, էլ կառաք, գառը... Ո՛չ մի բանիցը չի մո-

ռաճում. մարդը գիտի լաւութիւն, երախտիք... (Մարկոսին) Քոնը 75 մանէթ ան—գրել կը տաս 125... 25 մանէթ պակաս... էլ մի ասիլ թէ մենք երախտիքը բանի տեղ չենք դնում...

ՀԱՅՐԱՊԵՏ.—(Գրգռված) Ի՛մը ինչ բան գրել տամ, աղա...

ԳՐԻԳՈՐ.—(Վառնալով դէպի նա, զըստւած բարկութեամբ) Հը՛մ, քոնը... 200 չի, գրել կը տաս 300... է՛դ ան, կուգես՝ գրել տուր. չես ուզիլ՝ փողս բեր... Ի՞նչ ան, քէֆիդ չեկան... Բա կարծում ես մոռացել եմ... Միտդ չի, կանչեցի արտս հնձես—չեկար. այդիս փողես՝ փախար... Քեզից հլա մինչի օրս մի խիլ էլա չեմ տեսել:

ՀԱՅՐԱՊԵՏ.—(Բարկութեամբ զողալով) Բաս էտ ան, էլի... Համ էնքան տոկոս տամ, համ էլ մոռացաւ գամ բանեմ քեզ համար...

ԳՐԻԳՈՐ.—(Կատաղի) Մոռացաւ... Տօ բա ես քո հօրն եմ պարտական, ես քեզ. սօ, բաս քեզ տւածս փողը իմ կնգայ, աղջկայ բերնիցը կտրած չի, քրտինքովս աշխատածը չի... Հը՛, հարմադաղա, ասա տեսնենք... Ո՛նց ես էգուց և եթ սուղը տամ վէքսիւղ, տուն ու տեղդ վեր գրեմ, տաւաղը ծախեմ, քեզ չեօլերը քցեմ... Ա՛յ ես ձեզ մարդ ասողին, հա... է՛դ ան իմ լաւութիւնը... Գնա կորի, գնա փողս բեր՝ ու ունդ ըլի աչքիցս... Չեզպէսները պիտի քաղցած սատկին, որ խելքի գան... հարմադաղա...

6. ՆՈՅՆՔ ԵՒ ԹԷՐԷԶԱ

ԹԷՐԷԶԱ.—(Որ դռնից անշուշտ ներս էր մտել, գունատ՝ կռնում է դռան եւ ալանջ է դնում):

ԳՐԻԳՈՐ.—(Չէ նկատում նրան, երեսը չայրապետին է եւ շարունակում է, հետզհետե

աւելի զայրացած) Հայդէ, էլ ուր ես ցցել ըստեղ... Գնա փողս բեր. որտեղան կուգես՝ 200 մանէթս իր տոկոսովը գտի ու բեր... Թէ էսօր չես բերել, Ասաւած ան վկայ, փախաղ տակիցը քաշել կը տամ...

ՀԱՅՐԱՊԵՏ.—(Խեղճացած եւ մեղմ) Աղա, դէ ես ի՞նչ ասի որ... Ախր ասածս սկի հարիւր մանէթ չի ըլիլ, մէկ տարւայ մէջ երկու հարուր դարձրիր. հիմի էլ վրէս բարկանում ես, թէ ի՞նչ ան—մոռացաւ չեմ եկել ու բանել քեզ համար. ես թէ չէ՛ գառը, գինի ընծայ չեմ բերել... ու 300 ես շինում... (Ղացի ձայնով) Բա ես մեղքը չեմ, ուղում ես որ երեխերքս կտոճրեն... հիւանդ, սոված...

ԳՐԻԳՈՐ.—(Կատաղի) Տօ ի՞նչ անխմախ, որ թէկուղ ամէնքդ էլ սատկէք... Բա որ ըստնց ան, էլ ուր ես գողգողում, ուր ես մեծ-մեծ խօսում... Չէ, գնա, գնա փողս բեր ու ունդ ըլի... Չունիս—էգուց և եթ տակիդ դեօշակն էլ քաշել կը տամ... հարմադաղա... (Շարժում գործելու ժամանակ, յանկարծ նկատում է Թէրէզային եւ լռում):

ՀԱՅՐԱՊԵՏ.—Աղա...

ԳԱՆՈՒՍՏ.—(Որ նոյնպէս նկատում է Թէրէզին, բռնում է չայրապետին) Մոռա, սօ...

ԳՐԻԳՈՐ.—(Ճիգ է գործում, քաղցր ժպիտ ստանում եւ գնում է դէպի աղջիկը) Հը՛, օթախդ ես ուզում գնալ... Բա էդ ընչի՞ ես գոյնդ քցել... հիւանդ ես... (Գիւղացւոց, խիստ գէմքով եւ բռն շարժմամբ) Կո՛րէք...

ԳԻԻԿԱՅԻՔ.—(Կծկւած՝ անցնում են Թէրէզայի մօտով):

ԹԷՐԷԶԱ.—(Ղուռ՝ ծանապարհ է տալիս եւ կծկուն դիմադրելով, լաց լինելու պէս՝ նայում է նրանց ետեւից եւ յուզւած՝ կրծնում դռան):

ԳՐԻԳՈՐ.—(Ուզում է բռնել նրան) Բո՛ւ... անչի, էդ ի՞նչ էլա քեզ, էէ... Ուր է մայրդ... (Կանչում է դռնից) Ա՛յ կնիկ, Սաթենիկ...

ԹԷՐԷԶԱ.—(Որ երերուն՝ թուլացել էր, ծիգ է գործում, ուղղում է) Ոչինչ, գլուխս պտտեց... Թո՛ղ ինձ, ես սենեակս կերթամ... (Քայլում է դէպի սենեակը, քայց կէս ծանապարհին կանգ է առնում եւ յանկարծ դառնում դէպի հարը) Հայր... Ուրեմն... Իրաւ է այդ բոլորը...

ԳՐԻԳՈՐ.—Ի՞նչը. աղջիկա... (Խիստ) Դու մեզ լսում էիր... Ի՞նչ ես խառնում եմ առևտրական գործերի մէջ... Սա առևտուր է, դիմացինդ՝ կոպիտ, անտաշ գիւղացիներ... Նստի՛ր, նստի՛ր՝ գնամ մօրդ կանչեմ... (Ուզում է գնալ):

ԹԷՐԷԶԱ.—(Ոյժ տալով իրեն) Ո՛չ... Բնա, հայր... խօսել եմ ուզում քեզ հետ... Այդ դուռն էլ փակիր... (Նստում է):

ԳՐԻԳՈՐ.—(Ուսերը թռեւելով՝ դուռն է փակում, լուրջ կերպեր է ստանում եւ մօտենում է: Մի բոպէ երկուսն էլ լուռ են: Թէրէզը զուխը խոնարհած. իսկ հայրը ուշադրութեամբ զննում է նրան):

ԳՐԻԳՈՐ.—Ապա, ի՞նչ է ասելիքդ... Գործ ունիմ, ասա... (Կատարելապէս զըստւել է իրեն, խիստ դէմք է ընդունում եւ նստում) Խօսիր... Թէ հիւանդ ես—քաղաք գնա մօրդ հետ... Այդ ասել եմ քեզ, դու չես ուզում: Կուգես՝ հէնց այսօր գնա. երեւի կարօտել ես քաղաքին...

ԹԷՐԷԶԱ.—(Չարմացած եւ լուռ՝ նայում է նրան):

ԳՐԻԳՈՐ.—Դէ ասա տեսնենք... Թէ ցաւ ունիս և քաղաք չես ուզում գնալ՝ այստեղի բժիշկը կանչենք... Բայց... (Ժպտելով) չը լինի՞ փող է ուզածդ, հը... Գիտես որ չեմ խնայում ոչինչ... Ի՞նչ քան ես ուզում—տամ: (Չեղբը ծոցն է տանում):

ԹԵՐԷԶ.—(Տննելով ոտքի է հիմում, դէմ առ դէմ մի րոպէ նայում է հօրը, յետոյ խիստ) Հայր, դու ինձ միշտ երեխայի տեղ ես դնում... Ամէն բանի վերջը կայ, հայր...

ԳՐԻԳՈՐ.—Ուրեմն ի՞նչ է ուզածդ, ի՞նչ է ասելիքդ... Չը լինի էլի այն անպիտանի մասին է... Սիրում ես նրան—ինչո՞ւ մերժեցիր... (նկնորէն) Չուզեցիր իբր վարձ դառնալ իմ փրկութիւն... փրկութիւն... ինչի՞ց, օրիորդ, ունի՞ց... Նրանից, այդ լակոտից... Աւելի շուտով մասծիր նրան փրկել իմ ձեռքից. հասկանում ես. նրան, որի թողը երկինք կը բարձրանայ շուտով... (Լրջանում է) Թող երեխայութիւններդ, Թէրէզ. կարդացածդ բռնանների միջից վերցրած խօսքերն էլ թող... Սիրում ես նրան—գնա ես խօսք մ'արգելում: Ընդհակառակ... Տես, ես որքան բարի եմ և ներողամիտ: Նախատից ինձ, աւանդակ կոչեց—բայց եթէ դու կամենաս նրա կինը լինել—ամէնը կը մոռանամ և յօժարութիւնս կը տամ... Էլ բան ուզում ես: Սրանից աւելի՞ն...

ԹԵՐԷԶ.—(Քիչ լուռութիւնից յետոյ՝ վճռական) Հայր, ես ուզում եմ որ դու զրգջաս և չը շարունակես այլևս այդ կեդոտ առհաստ, այդ... Գիւղացիներին կեղեքելը... (Խիստ) Ամաչում եմ, որ քո աղջիկն եմ, հայր...

ԳՐԻԳՈՐ.—(Ուտնում է տեղից եւ քարկուծեամբ) Ահա թէ ինչ... ամաչում ես որ եմ աղջիկն ես... Այդպէս ես խօսում դու հօրդ. հօրդ հետ, որ քեզ համար ոչինչ չի խնայել... Ա՞յդ է քեզ սւսման տալու հետեանքը... Այդպէս ուրեմն... Լաւ, դու այսուհետեւ կը տեսնես. կը տեսնես թէ ի՞նչ է նշանակում հօրդ դէմ դիմել, նրա գործերի մէջը խառնել...

ԹԵՐԷԶ.—Հայր...

ԳՐԻԳՈՐ.—(Խիստ բարկացած) Լաւրանդամութիւն չեմ ուզում... Ահա ուսմանդ, քեզ ազատ մեծացնելուս, երես տալուս հետեանքը... (քայլում է դէպի դուռը) Չը համարձակես հօրդ հետ այդպէս Անդգամ...

(Գուրս է գնում եւ դուռը շրկոցով փակում ետեւից):

7) ԹԵՐԷԶԱ, ՏԻԿԻՆ ՎԱՐԱԿԵԱՆ

ԹԵՐԷԶ.—(Գէմքը ձեռքերի մէջ՝ մտնում է, յետոյ, յուսահատ ցնցումներով հեկեկում է բազկաթռի մէջ: Այդ տեսում է մի րոպէ. բեմի վրայ լուռ թիւն է):

ՏԻԿ. ՎԱՐԱԿ.—(Ներս է վազում վախեցած) Թէրէզ, քեզ դուրբան, էդ ի՞նչ տեղել քեզ... Հէրդ զրկեց՝ թէ հիւանդ ես... (Գրկում է նրան) Ասա, քո արտաքինը աջաւում... Բժիշկ կանչենք...

ԹԵՐԷԶ.—(Բարձր հեկեկալով՝ ընկնում է մօր գիրկը) Ախ մայր, մայր, որքան թշուա եմ ես...

ՏԻԿ. ՎԱՐԱԿ.—Բժշկ... այ աղջի, ի՞նչի, ի՞նչ էլաւ քեզ... Գնանք, գնանք պառկիր... (Տանում է ննջարան, որի բաց դռնից լսում է Թէրէզայի հեկեկալու ձայնը):

ՏԻԿ. ՎԱՐԱԿ.—(Ննջարանից) Բժշկ, աղջի դէ հերիք ա է՛հ... Պանկի, պանկի... Էս ջուրն էլ մէկ խմի՛ր... Ըտէնց... (Գուրս է գալիս ննջարանից, դուռը փակում քիչ կանգնում ականջ է դնում, յետոյ զուխը իրերցնելով եւ զգոյշ քայլերով՝ խորքի դռնից դուրս է գնում):

Բեմի վրայ մի րոպէ լուռ է:

8) ԳՐԻԳՈՐ, ՄԱՐՏԻՐՈՍ, ԲԱՂԴԱՍԱՐ, ՄԱՐԳԱՐ և ԶԱՔԱՐ

ԳՐԻԳՈՐ.—(Ներս է մտնում: Նստից՝ Բաղդասար, Զաքար, Մարգար եւ Քաջալ Մարտիրոս) Էդպէս, հա, Բաղդասար ամի... (Նստում է) Ադա, բաս էդքան էլ նամքեօն կըլեն... Ինձ վրայ գանգատ էք ուզում անի, ինձ սո՞ւղն էք ուզում քաշ տայ, էս ծեր հալո՞վս... Հայ—գիտի աշխարհ, հայ. տես թէ ի՞նչ օրերի ենք հասել: Սրանց ես լաւութիւն անեմ, փող տամ, խեղճութիւնից ազատեմ, որդկերանցը սովածութիւնից քաշեմ—հանեմ... (Մարգարին) Ադա, բաս դու մոռացար, որ տաներս ընկել՝ աղաչում էիր... Թիւ ձեր նամուսին, հա... (Զաքարին) բաս դու, բէհայեան, դու չէիր, որ հլա կնգանդ էլ ուղարկել էիր, լաց, արտասուք... Հմի ինձնից գանգատ էք անում, էլի, ինձ սուղն էք քաշում հա... Տօ բաս ուզում էք փողս սուտի, սուրանայ... Բա ըտէնց բան էք լսել, հը... ԲԱՂԴԱՍԱՐ.—(Շփոթեմ) Եանի որ... հանց որ... տոկոսը...

ԶԱՔԱՐ.—Էլ ընչի՞ ես հեղանում, աղա. էս ա սուղը կը վճռի, էլի, թէ մենք քեզ էնքան ենք պարտական, ինչքան գրած ա վէքսիւնը...

ԳՐԻԳՈՐ.—Փիէ... Տօ բաս դու չես ձեռք քաշել տակին... Հրէս, այ... (հանում է վեքսիւնի ծրար եւ միջիցը մէկը դուրս բերում՝ խօսելով միանգամայն) Թուր ու թուրքով վախացրի, բուկիցդ հո՞ւպ տւի... Զէիր ուզում—սուր էիր ձեռք քաշում: Հը, ըտէնց չի, Մարտիրոս:

ՄԱՐՏԻՐՈՍ.—Դէ հմի, աղա, սխալւել են, դաւաթ են արել, բաշխի... Խեղճ մարդիկ են. փող չունին, որ տան...

ԳՐԻԳՈՐ.—Տօ, որ փող չունեն տան—

էլ սուր են գանգատի գնում: Ընչի՞ մէկ չեկան ինձ մօտ, խնդրէին, «Գրիգոր աղա—ասէին—դուրբան, չունենք, չենք կարող պարտքներս տալ. խղճա մեզ»... Ես էլ խօ մարդ եմ, կնիկ—դաւակ ունիմ, խօ ջանավար չեմ... Հնալթ մի բան կանէի. եա թէ, սիւ ա իմանում... Քրիստոսն չեմ, սիրտ չունեմ... Քաղցր լեզուն, աղաչանքը՝ ի՞նչ քար սիրտ ասես՝ որ չը շարժի... Հը, Բաղդասար ամի, սրան ինչ կասես, սուտ եմ ասում... Ես անգամ մարդ եմ, քեզ քիչ լաւութիւն եմ արել...

ԲԱՂԴԱՍԱՐ.—Հանց որ... ի հարկէ, Աստուած կիանք տայ... Ամա դէ ասում են՝ թագա զակօն... Եանի որ մենք էլ, դէ, ուտելու հաց չունենք, սոված...

ԳՐԻԳՈՐ.—Տօ ընչի՞ ինձ մօտ չեկար առաջ: Մէկ գայիր, ըտոնք դիւ ասէիր... Թէ քեզ հետ կուէի, ուշուց տայի, եա մերժէի—էլի գնայիր էն լակոտի մօտ... Հը, հէնց հմի, որ էդ ասում ես, եանի ես շատ գիտէի, որ հալդ փիւս ա, չես կարողանում պարտքը տայ...

(Լուռ՝ նայում է զիւղացոց եւ միւս կողմից հանում է ձեռքի ծրարից երեք մուրհակներ: Գիւղացիք Թէեւ զլսիկոր են, երբ Գրիգորը իրանց է նայում, սակայն անմիջապէս, երբ չէ նայում, սրտատրոփ հետեւում են թղթերի շարժմանը) Տօ, հայւաններ, Էս եմ էլի ձեր հին բարեկամը, թէ էն թագա եկած լակոտը... Էլ սուր էք հայ—հարայ նրան վաղել... Ըստի մտիկ տւէք... Ես որ ուզեանամ չար լինել է, որ վեքսիւնիդ տանեմ սուղը, ունեցած չունեցածներդ գրեմ տամ—էն լակոտը ձեզ կազատի... (քրքիշ) Ախմախներ... Ամա, տեսէք, ես էն մարդը չեմ... (Յանկարձ՝ Բաղդասարին) Հլա մէկ մօտ արի, ամի... Մտիկ տու... Էս չի քո վէքսիւն:

ԲԱՂԴԱՍԱՐ.—(Մօտենում է եւ նա-
